

213

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Ինֆուստր

86



3376

ՅՈՂԶԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆՑ.

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

II ՀԱՏՈՐ.

ՄՈՍԿՈՒՍ.

ՏՊԱՐԱՆ ՄԿՐՏԻՉ ԲԱՐԽՈՒԿԱՐԵԱՆԻ.

1892

(58)

2004

Կարգադրութեամբ Կ. Ս. Բաբայան
Երևոյ ԳՈՎԱԶԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵՆԵՑ. Ի. Կ.

891.99
10.89

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ



ՄՈՍԿՈՒՍ.
ՏՊԱՐԱՆ ՄԿՐՏԻՉ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆԻ.
1892

95696-42

Дозволено Цензурою. С.-Петербургъ, 7 Мая 1892 г.

2 (26-44)

(10194-57)



86-2014
486

Типографія М. Бархударянъ, Мясницкая, д. насл. Анапова.

Ա Ն Ո Ւ Յ.

Մ Ա Ս Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն.

I.



մպշող¹ գիշեր է. ահա քեզ Լօռու
Զքնաղ լեռները ձգվում են հեռու.
Սյս լեռների մէջ իւր աւանդներով
Մի պարզ ժողովուրդ սպրում էր
սիրով,
եւ նորա հոգին յստակ էր և վէս
Իրան լեռների, աղբիւրների պէս:
Սյն օրից օրեր դեռ շատ չեն անցել
եւ հասած վերքը դեռ չէ հնացել.—

¹ Ամպշող—արևի կամ լուսնի աղօտ լուսատուութիւնը ամպի տակից:

Լսվում են մէկ-մէկ հնաց երգերը —
 Եւ հին սերունդի բոլոր կրքերը —
 Նրանց արատը, արարքն անվհեր
 Տնչող ձայներում պահում են անմեռ:

II.

Տեսնում ես, գիւղը մռայլի միջին
 Սեխն է տալիս սարի ստորոտում,
 Նրանից ներքե խոր ու խաւարացին
 Ձորում խլածայն դեան է որոտում:
 Շէն ու շրջակայք գրկել է Մորփէն
 Եւ ոչ մի տեղից չէ լսվում շրշեն, —
 Կէս գիշերուանից լռել են արդէն
 Սայլորդի երգը և հովուի շհուն:

III.

Այս Ժողովուրդին միշտ պատրաստ ու կազմ
 Իրանց քաջասիրտ իշխան-մեծերը
 Առաջնորդում էին դէպի պատերազմ
 Եւ վճռում էին ծագած վէճերը:
 Իսկ հիմայ նրանք հանդիստ ու խաղաղ
 Իրանց խողերում և հին վրանում

Ապրում են աղքատ և արդէն անցեալ
 Սրկածներին են պատմութիւն անում:—
 Այս ձորերումն էր, որ Բագրատունին
 Բախտի հետ խաղաց լուր խաղը վերջին,
 Սէպ Տուաէորդին, Օհան Օձնեյին
 Հայրենեաց պաշտպան սուսերն օրհնեցին.
 Այստեղ տակաւին պապական խօսքով
 Զրոյց է անում ծիր շինականը,
 Թէ այս ձորերում պարսկատանջ բազկով
 Կռիւ է արել Մամիկոնեանը.
 Կռիւ է արել հաւատի համար
 Ընդդէմ անօրէն թրշնամիների,
 Կառուցել ձերմակ, բարձրաբաշ տաճար
 Իբրև պահապան իրան աշխարհի:
 Եւ այսօր ապրում է այն քաջարի
 Նախնեաց սերունդը հայրերի շինած
 Հրրաշակամար, քանդուած տաճարի
 Մեծ զօրութեանը միայն ապաւինած...
 Բայց առ ու փախի պատմութիւններով
 Մնուել են նրանց միտքն ու սրտերը,
 Եւ ահա այսօր տեսնում ենք զօրքով
 Նախնեաց բարբերի նսեմ ստուերը:

IV.

Ո՛րքան սիրել եմ, չքնաղ հայրենիք,
 Քո սար ու ձորում մեծացած մարդկանց
 Սովորութիւնքը պարզ ու վայրենի—
 Ատելը անկեղծ, սիրելը սրտանց.
 Երբ որ միասին զուարճանում են
 Իրանց օջախում, թէկուզ չոր հացով,
 Միասին վարում, միասին ցանում են,
 Միտիթարվում են մի բախտի յուսով:
 Նրանց յարկի տակ շատ ու շատ անգամ
 Ես էլ եմ նրանց եղել խնդակից,
 Երբ որ, ցաւները մոռացած, առ ժամ
 Ուրախացել են արցունքի տակից:
 Միրել եմ տանջուել նրանց ցաւերով
 Անարգար հասած օխերիմ ձեռքից,
 Եւ պատանեկան վտտահ ցնորքով
 Նրանց բողոքին լինել ձայնակից. . .
 Եւ կողաղակեմ, քանի տեսնում եմ
 Քո շեմքի վերայ օտարի հետքեր,
 Եւ կրհառաչեմ, քանի ծխում են
 Քո կրծքի վերայ նորանոր վէրքեր:
 Ահա վերատին յարութիւն առար
 Քո վարած կեանքով իմ յուզուած մտքում—

Առաւել տխուր, առաւել խաւար,
 Քան ցոյց տուածը պատմողի գրքում.—
 Դէմքեր չարչարուած նահատակների,
 Յուսահատ արտունջ մեռնող ձայների...
 Ահա, և մթնում, կուչ եկած մեջիկ,
 Լալիս է մենակ մի սիրուն աղջիկ:
 Սյապէս՝ այն սէրը, որ փոթորկալի
 Դու վառել ես քո որդոց սրտերում,
 Անլուր տխրութեամբ և անլուլի
 Հեծում է նրանց բոլոր երգերում:

V.

Ձարաբանող աշխարհ, սիրով շունչ առած
 Քո երգիչները քանի երգ հնչեն,
 Միթէ խաւարի բռնութեան տարած
 Զոհերի ցաւով պիտի հառաչեն:
 Եւ ինչո՞ւ համար քո զաւակները
 Դէթ ընտանեկան չունեցան խնդում,
 Բի՞չ էին դրսից հասած ցաւերը,
 Բի՞չ էր օտարը նրանց զիշատում...
 Թշուառ, չիմացար ստեղծել դու կին,
 Դիշերուայ մթնում փնտրեցիր նրան,
 Լռութեան կնիք գրիւր շրթունքին,

Եւ պատրաստեցիր... տանջանք անբաժան:
 Եւ տանջանքներով կապրես անկասկած,
 Ինչպէս որ մինչև այսօր ես ապրել,
 Դրսից խոցոտուած, ներսից խոցոտուած,
 Մի օր անարգուած, միւս օրն առաւել...

VI.

Ի՞նչ ես կամենում դ՛ու, գոռօղ հօգի,
 Մարդոց արցունքը քեզ դ՛ուր չէ գալիս,
 Նեղ է քեզ համար սահմանը կեանքի...
 Լուռ կայ, հանդարտուի՛ր, և ցաւ զգալիս,
 Եթէ կամենաս քո ալէկոծուած
 Զօրութեամբ զիպչել մարդկանց ախանջին
 Եւ նրանց սրտին ազգել անկասկած,
 Կսկիծրդ յանձնիր սրտադէտ երզչին,—
 Մարդիկ ընկած են, նրանց չեն ազդում
 Իմաստուն խօսքեր կեանքի հոգատար,
 Եւ հարկաւոր է հոգեկան շարժում—
 չեշտալուր ձայներ—պօէտի քնար:

VII.

Դէ, թուի՛ր ինձ հետ աննչով հրաթև,
 Որպէս թռչում է կարօտած սէրը,

Մինչև կրականես քեզանից ներքև
 Խորին ձորերի սև անդունդները.
 Եւ քո թոյլ ոտքը թող գէթ մի անգամ
 Շօշափէ բարձունքն ազատ սարերի...
 Աչքդ բաց արա, նայի՛ր, բարեկամ,
 Ահա հին Լօռին հայոց աշխարհի:

VIII.

Ողջոյն, վեհափառ լեռներ երկնահօւպ,
 Ռ՛վ հրաշալիք հօր Սրարչի,
 Եւ, ահա, հողիս, ինչպէս մի ասուպ,
 Թուած գալիս է ձեր դիւխին հանդէս.—
 Սյդ գագաթներին, որ ձիւնապսակ
 Փայլատակում են ընդդէմ աստղերին,
 Սյդ ամպերի մէջ, որ կուտակ-կուտակ
 Ծանրանում են ձեր շքեղ ուսերին,
 Սյդ սառն ու յստակ աղբիւրների մօտ,
 Որ ապառաժից յորդառատ բղխում,
 Աւազի վերայ, կայտառ, ծիծաղկոտ
 Երեխի նման կրկչում են, խաղում:
 Պարզ առունների դալար ամերին,
 Որ սահանքաւոր իջնում են փրփրած,
 Ուր որ կենսաշունչ հովը լեռնային

Մերթ վազվզում է, մերթ դգվում կամայ.
 Ուր որ համասփիւռ բուրմնէքը ծագկի
 եւ ծըծմբային հօտը կայծակի
 Խառնվում իրար և տարածվում են,
 Խոռոչ ու ծործոր բռնում, լցնում են:

IX.

Օրհնութեան վայրեր, ուր աւոյց կեանքի
 եւ զօւարթութեան շունչն է միշտ խաղում,
 Հոյակաւ երկիր, որ միայն երհնքի
 Բարձրութեան մէջ եւ խորհուրդդ խորհում:
 Ուզում եմ պատմել, թէ ինչ եմ սիրել, —
 Բարձրացնել փառքը քո վսեմ անուան,
 Ուզում եմ երգել և քեզ մեծարել,
 Արժանի՛ց երգի և իրաւորութեան.
 Բայց թոթովանքը ապիկար լեզուի
 Աստուածայինը չէ կարող յայանել,
 եւ նա մնում է, որ պիտի ասուի,
 Որ միմիայն քեզ է երկինքը տուել:
 Ա՛խ, թէ քո տուած հոգուն ու սրտին
 Տայիր և թարգման—հրաթափ լեզու,
 Քեզ մտքից հանող քո թշուառ ուրբին
 Քո վեհութեանը կըլինէր հասու:

X.

Դու մեզ այն ասա, շատախօս պօէա,
 Քո սիրած երկրում ի՞նչպէս են ապրում,
 Թէ հաշա են արդեօք իրանց բախտի հետ
 Մարդասիրութեան լուսաւոր դարում:
 — Դարձեալ սասնասիրտ յիշեցնում էք այն,
 Որ համբերութիւնս մաշել է իսպառ.—
 Ուզում էք լսել, թէ դեղջուկ հէզ հայն
 Ինչպէս է հեծում աղքատ ու թշուառ:
 Բայց ես չեմ պատմիլ նրա խրճիթում
 Նոյն իսկ սեպհական աչքով տեսածը,
 Թէ ոնց է նրա կեանքը դիշատում
 Խիտ ու չար բախտի հրաւիրածը.
 Որի կրքերը վայրենի, անսանձ
 Մարել են հուրը ոգևից սրտի,
 Որ մեծարում է պոռնիկ դեղապանձ
 Քան փրկութիւնը ողջ ժողովուրդի...
 Որի անբարիշտ վարմունքի համար
 Երբէք, ոչ ուրեք ես լռելու չեմ,
 Թէկուզ և նրա ձեռքից չարաչար
 Պատիժ ստանամ և մահով կորչեմ:
 Կըպատմեմ սակայն պատահած մի դէպք,
 Հին սովորութեամբ, բայց նոր կատարուած,

Եւ զուք կիմանաք, երբ որ չըզիտէք,
Ինչպէս են ապրում երկրում իմ սիրած:

XI.

Սյն ճոխ դաւառում, ուր Չաթինդաղի
Ուսերից պայծառ արևը ծագում,
Իրիկնապահին Ղարախաչ սարի
Ետեն է շիկնած երեսը ծածկում,
Ուր որ Քօշաքար, Լայվար ու Դվալ,
Հսկայ պահնորդներ, իրանց շարքերով
Բարձրացած խրոխտ և լայնածաւալ
Հսկում են երկրին անբուն աչքերով.
Ուր հին Դերեղը իւր վտակներով,
Ամեն մի քարի մօտից անցնելիս,
Վառուած վաղեմի յիշատակներով,
Մերթ զայրանում է, մերթ փղձկում—լալիս,
Անուշն ու Սարօն քոյր-եղբօր նման,
Սարում ու դաշտում, մանուկ օրերից
Իրար հետ սիրով, խաղով մեծացան,
Եւ շատ են քաշել իրար մաղբրից:
Նրանց մայրերը հաւասար օրհնում,
Հաւասար սիրով խնամում էին,—
Մի օձօրքի տակ և մի վրանում

Երեխաները մեծանում էին:
Մեծանում էին պարզ ու վայրենի,
Քօշաքար սարի քօշերի նման. . .

XII.

Սյստեղ յիշեցի ես այն օրերը,
Որ աննկատելի անց կացան արագ,
Եւ աղբերաշատ, կանաչ սարերը
Ինձ երևացին միաժամանակ:
Ծանր վեհութեամբ ամպերի միջից
Նրանք նայում են ծանօթ հայեայքով,
Սյնտեղ քար, ծառ, աղբիւր... ճանաչում են ինձ
Մի սիրուն օրով, սիրելի անցքով:
Եւ, անձաւներից քարաժայռերի,
Թաւուտ անտառի լռին խորքերից,
Մանուկ հաստիկի աղաղակների
Պարզ արձագանքը լսում եմ նորից:
Պարզիկայ զիշեր. թաղիքի վրանից,
Զմայլած սրնդի ձայնով թովչական,
Նայում եմ,—ահա երկինքն աստղալից
Կաչում է հեռու լեռանց բարձրութեանն:
Ուրիշ մի զիշեր, տխուր ու խաւար,
«Դողի ու դայլի զիշեր» ահաբեր,

Եւ անքուն հովուի սաստոյ, աղաբար
 Աղաղակները ականջունն են դեռ:
 Իսկ առաւօտեան աղմուկը բխի,—
 Հաջոց, բառաչոց, խրխինջ ու գոչուն...
 Այն աղմուկի մէջ կիսավայրենի
 Ինձ սիրելի է ամենակէսչուն:
 Ես այն սարերումն էի երեխուց,
 Այնտեղ տարփում էր մի գոյգ սիրահար.
 (Նրանցից մէկը մեռած է վաղուց,
 Միւսն աղօթում է մեռնելու համար):

XIII.

Անցան տարիներ, նրանք մեծացան,
 Մի օր էլ երբ որ իրար նայեցին,
 (Եւ այն հայեացքը չէր սփորական)
 Իրար հասկացան, բայց լուռ պահեցին:
 Այն մի հայեացքով պատանի Մարօն
 Գրկեց Անուշի պատկերը հողով,
 Այն ինչ գեղեցիկ Անուշը նրան
 Միրեց կուսական առաջին կրքով:
 Բայց, հազար փոսոս, առաջին անգամ,
 Երբ մարդու սրտում զարթնում է սէրը,
 Նրա հետ, իսկոյն, սատանայական,

Յայանվում են և կեանքի հողսերը:—
 Հասած Անուշին իւր ծնողները
 Մօր ծնկան կողքին կապեցին կամաց,
 Մարօն էլ վերցրեց իրանց շները,
 Դադանակն¹ ուսեց, ոչխարը գնաց:
 Եւ այնուհետեւ սիրող սրտերի
 Տանջուող կարօտին էլ սահման չըկար,
 Օրերը նոյնպէս խիստ անտանելի
 Տխուր ձանձրոյթով թուացին երկար:

XIV.

Չէ՛, ես չեմ ուզում բռնելով ջնջին
 Խօսել սիրավառ սրտի բոցերից,
 Եւ անպատում է սէրը առաջին,
 Նա վեր է մարդու բոլոր խօսքերից:
 Եթէ, բարեկամ, քեզ դեռ չեն այրած
 Երկնքից զարկած նեւերը սիրու,
 Կամ եթէ Աստծուց շնորհք չես առած
 Մարչկանց սրտերը ներս թափանցելու,
 Եւ դու չըգլխես թէ ինչ է սէրը,
 Ինչպիսի քաղցրը տանջանք է անհուն.

¹ Դադանակ—մանակ, հովուական ցուպ:

Արի՛, բարձրացիր դէպ այն սարերը,
 Ուր որ ապրում է Անուշը սիրուն:
 Արի՛, որ նրա խանդով բռնկած
 Սև աչքերը սև յծնքերի տակից
 Մի անգամ աչքիդ ընկնէին յանկարծ,
 Որ սիրտդ դողար կրքոտ հայեացքից.
 Որ այն հայեացքը փարատեր խելոյն
 Այդ քո սրտամաշ տարակուսանքը,
 Որ ճանաչէիր երջանկութիւնը
 Ապա տանջուելով սիրէիր կեանքը.
 Եւ որ ասէիր,—իրաւ, այս ծովծով
 Աչքերը խել են շողերն երկնքի,
 Որ լուսաւորեն իրանց հայեացքով
 Մուսլութիւնը մարդկային կեանքի:

XV.

Հողեղէն հրեշտակ, դու, որ անպատճառ
 Ոգևորութեան համար ես ծնուել,
 Թէ կարենայիր մեր անմխիթար
 Կեանքին մի ազատ հայեացքով նայել,
 Գուցէ չըհանգչէր մարդոց սրտերում
 Անվերջ ապրելու սէրն աստուածային,
 Թերևս այսքան յաւեր անպատում

Այս ժողովրդի զլինն չըզային.—
 Քեզ հետ, քո սիրով մարդը թե առած
 Կարող է թէկուզ երկինքը թռչել,
 Ինչպէս առանց քեզ չքննող արարած,
 Վիճակուած է միշտ յուսահատ կորչել:
 Բայց ես ընդհատուած իմ խօսքն ասեմ թող
 Եւ դու կ'իմանաս, որ այն աչքերի
 Հրապուրանքը հողի կախարդող
 Հանդչում է ծովում արտասուքների:

XVI.

Փամանակի հետ միանգամ վառուած
 Սէրը զօրացաւ նորանոր զարկով,
 Եւ Փամանակ էր, որ սիբահարուած
 Աղջիկն ու աղան միանան կարգով:
 Բայց ի՞նչ եմ ասում,—Քօշաքար սարի
 Հովիւը կո՞՞նէ, դնայ հօրն ասի,
 Որ իրան համար հարսնացու ճարի
 Կամ ծնողներից Անուշին ուղի.

¹ Կոո—լեոնականները կոո կոչում են դաշտարնակներին, լօնեցիք մասնաւորապէս շիրակացիներին. այս բառով «անարի, վախկոտ» են հասկանում:

101945102
 3376
 86-2014



Կամ թէ այն աղատ լերանց հովուհին—
Սիրուն Անուշը իւր մաքուր սիրով
Ձի՞ հրապուրում խանգավառ հովուին,
Եւ արժանի՞ չէ, որ փախցնեն զօրով:

XVII.

Սյսպէս է, այո՛, իզիթների մէջ,
Որ խնամախօսի քար չունեն շէմքում,
Եւ նրանց սէրը թէլ միշտ անշէջ,
Սակայն լուռ է և բանտարհուած սրտում:
Թէ քաջ տղայ է՝ շնորհքը ցոյց տայ—
Սրտի սիրածին թող փախցնի տանի,
Որ և լսողը ասի, թէ՛ ահա
Մի մարդ պսակի, սիրոյ արժանի:

XVIII.

Նրանց պատերը մեծ Կուրի ափին
Խիստ հրճվում էին, երբ իրանց արքան,
Սիրուն, սևաթոյր նժոյզը տակին,
Անցաւ Կուր գետը արձւի նման.
Լեռնականների բանակի գիմոց
Ձգեց ոսկէօղ շիկափոկ պարանն,

Բռնեց աչադեղ դստերն ալանայ
Եւ արագ հասցրեց իւր կարմիր վրանն.
Իսկ բանաստեղծը Գողթան աշխարքի
Երգ հիւսեց աշխոյժ, երգեց ու լռեց,
Բայց ժողովրդին տիրոջ արարքի
Նռչակը երկար դեռ ոգևորեց:

XIX.

Շատ օր չէ անցել, կար մի հարսանիք,
Ձուարձանում էր ամբօխը գիւղի,
Սարերից իջել հովիւ պատանիք
Աղջկայ են նայում, բայց գաղտագողի:
Եւ պարից յետոյ լայն հրապարակ
Բաց արին մէջըն այն հարսանքատան,
Ձօփուր զուռնաչին միաժամանակ
Սկսեց կոխի՞ ածել իւր զուռնան:
Եւ ձայն են տալիս «քաշի՛ հա, քաշի՛...»
Եւ զուրս քաշեցին հազիւ երկուսին.
Սարօն էր մէկըն, իսկ միւսն Անուշի
հարազատ եղբայր—գառնարած Մօսին:
Հարսանքաւորը պարսպի նման

1 Կոխ—գօտեմարտ:

Կանգնած բաժանուեց երկու բանակի,
 Եւ իւրաքանչիւրն ընտրեց փահլեվան¹
 Ու ողևորեց տղերանց մէկին:
 Գոռում են, դոռում երկու բանակից,—
 «Սրտապինդ կայէք, մի՛ վախէք տղերք»,
 Իսկ նորահարսի փարզի² քամակից
 Նայում են անթիւ հարսն ու աղջկերք:
 Եւ պատվում են լայն հրապարակում
 Սրջերի նման երկու հովիւներ,
 Իսկ ժողովուրդը դեռ աղաղակում,
 Քաջալերում է «ջան փահլեվաններ»:
 Եւ տաքանում են տղերքը սաստիկ,
 Զուխի քղանցքը պինդ հաւաքելով
 Զարկում են դեանին ձեռքերը հասալիկ,
 Որ յամաքեցնեն օրախնքը հողով:
 Երակների մէջ կրակ է վաղում,
 Իսկ աղանջները կարմրել են արդէն,
 Կատաղի թափով իրար են համում,
 Հէնց որանգ որ է միմեանց կըջարդեն...
 Ընկերների մէջ օրէնք է շատ հին,

¹ Փահլեվան — ըմբիշ: ² Փարդայ—վարագոր. Լոռու
 գիւղերում, երբ որ հարսանիքը լինում է մի գլխատան
 (մեծ սենեակի) մէջ, կանայքը տղամարդկանցից բաժան-
 վում են մի վարագորով, որի նտն նստում է և նորահարսը:

Որ այսպիսի մեծ բաղմունթեան միջում
 Զըպէտքէ դեանին զարկել ընկերին,
 Սյլ պէտք է անել հարկաւոր զեջում:
 Մոռացաւ Սարօն օրէնքն ու աշխարք,
 Երբ կանանց միջին Սնուշին տեսաւ.
 Սիրար սկսեց բարախել արագ,
 Աչքերն արիւնով խփոյն լցուեցաւ.
 Եւ ոյսպէս, մինչդեռ անհող էր Մօսին,
 Սարօն իւր բոլոր ոյժը հաւաքեց,
 Ուջէն քաշելով¹, յանկարծ ընկերին
 Գեաին տապալեց ու կրծքին չոքեց:
 Ամբօխը թափուեց հարայ-հրոցով,
 Վկր թուցրեց երկու փահլեվաններին,
 Եւ ուրախութեան աղմուկ-գոռոցով
 Յաղթողին փեսի թախտի² մօտ բերին:
 Յնծութեան ձայներ, ծափերի զարկից
 Շարժվում են, զողում պատեր ու օձօրք,
 Իսկ նորահարսի փարզի քամակից
 Նայում են, զովում հարսն ու աղջկերք:

¹ Ուջայ քաշելը—ախոյեանին յաղթելու հնարքներից
 մէկն է, որ կատարվում է ոտի ծարպիկ շարժումով (ու-
 ջայ—աղբ): ² Թախտ—այստեղ գործ է անվում գահի
 մտքով, որովհետև նրա վերայ նստում է Թագաւորը (նո-
 րափեսան):

Զայրացած Մօսին դեռ չէր հանգարավում,
 —Թող դայ, ասում էր, որ բռնենք նորից,
 Թէ չէ նամարդը¹, արեւս եմ երգվում,
 Զի ազատուելու երբէք իմ սրից:
 Եւ թագաւորի թախտիցը Սարօն
 Պարզե ստացաւ մի կարմիր խնձոր,
 Իսկ Մօսին ուրախ հարսանքատանից
 Գուրս գնաց խեղճն սաստիկ վերաւոր:

XX.

Եւ Մօսին ուրախ հարսանքատանից
 Գուրս գնաց խեղճն սաստիկ վերաւոր.
 Արիւն էր կաթում սեականած սրտից,
 Գնում էր շտապ և քայլամուր:
 «Ամօթ քեզ Մօսի... թուք ու նախատինք...
 Ամօթ քեզ նման դոված իգիթին...
 Մի անունդ յիշիր, մի բոյիդ մտիկ...
 Դեռ քո թիկունքը չէր տեսել գետին...
 Ի՛նչպէս վայր ընկար դու սարի նման,
 Երբ որ նայում էր ողջ զիւղը կանգնած...»

¹ Նամարդ—տմարդի, նախատական բառերից ամենա-
 խիստն է լեռնականների մէջ:

Գ՞նու... կ՞ուչ գաս տակին Սարոյի ծնկան,
 Նրանից յետոյ երեւս կանսնց...
 Այս բանն եկե՛լ էր խիլի քո գլխին,—
 Ծաղրատեղ դարձար աշխարքի միջին...
 Դէ մեռի՛ր էլե... գետինը մտի՛ր...
 Տղայ չես լինիլ, եթէ կուլ տուիր...»
 Մտմտում էր նա և առամները
 Կրճրաայնելով մահ էր որոճում,
 Յանկարծ բաց արաւ արնոտ աչքերը
 Գիւղից հեռացած, անտառի միջում:

XXI.

Այն օրից սկսած թշնամի դարձան
 Երկու ընկերներն այս դէպքի համար,
 Բարեկամներն շատ չարչարուեցան,
 Բայց հաշտեցնելու չըզտան հնար:
 Կամակոր Մօսին այլևս ինչ խելք էր,
 Որ դեռ աչքը բաց, վրէժը սրտում,
 Իրան հարազատ քրոջը տեսնէր
 Անհաշտ թշնամու—Սարոյի զրկում:
 Գուցէ զիշերս էլ խանչալը հանած
 Քրոջն սպառնում է նա, թէ կրսպանի,
 Եթէ Սարոյի սիրով պահպանած

Անուներ իրան սրտից չըհանի:
 Ո՞վ դիտէ, գուցէ հէնց այս զիշեր էլ
 Թշնամիները անհաշտ ու յամառ
 Մէկմէկու հօտից ոչխար են քշել,
 Միմիանցից վռէժ աւննելու համար:
 Կարող է նաև պատահել յաճախ,
 Որ մէկի գէղը—արգիւնքը հնձի,
 Գիշերուայ ժամին յանկարծ կրակուած,
 Երկնահաս բոցով աստղերը խանձի:

XXII.

Սրդէն վառուած է սէրը կուսական
 Եւ առչորում է մատաղ սրտերը,
 Էլ չի կարելի սառն ստեղծութեան
 Ծնչով հանդցնել նորա բոցերը:
 Իսկ եթէ մահը հասնի վաղաժամ,
 Նա դարձեալ կապրի պօէաի մտքում,
 Եւ երկար օրեր վառ ու անթարշամ
 Կըմնայ նորա սիրտ այրող երգում:
 Եւ կըզան օրեր, երբ երջանկութիւնը
 Կըթաղաւորի աշխարքի վերայ,
 Ցաւ ու տանջանքի երգչի անուներ
 Թող այնուհետև երկրից վերանայ.—

Տխուր ձայները նորա պատմութեան
 Չըմնայլեցնեն զուարթ գէմքերը,
 Եւ թող բախաւոր մարդիկ չիմանան,
 Թէ մի օր այսպէս անբախտ էր սէրը:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ.

XXIII.

Դեռ ևս զիշեր կայ. անուշիկ քնով
 Քնած է զիւզը անօր խաւարում,
 Եւ կախարդական տխուր ձայներով
 Օրօրք է ասում Դերեղը ձորում:
 Նիրհում են աստղերն, և աստեղադարդ
 Երկինքը ջինջ է, թափանցիկ, անհուն,
 Կասողտ եթերքում սահում է հանդարտ
 Թմբած ու դանդաղ լուսինը անբուն.
 Եւ, Ղարախաչի կատարին հասած,
 Յանկարծ նայելով մութն արևելքին,
 Լուսաստղը ահաւ,—ահից դալկայած
 Շաապեց թաղչել սարի քամակին:

XIV.

Այս խորհրդաւոր ժամին զիշերուան,
 Երբ բաժանվում է լոյսը խաւարից
 Եւ քնած երկրին հաւը մի բերան
 Լուսոյ աւետիք տուեց իւր թառից,
 Գիւղի մի ծայրում մի բան անց կացաւ,—
 Շները խմբով սաստիկ հաջեցին,
 Միասին մի խուլ «հէյ հէյ» լսուեցաւ.
 Եւ չէր լուսացել, հաւար կանչեցին:

XXV.

Դեռ գորշ ամպերը վաղ առաւօտեան
 Նոր են ջուր խմած ձորից բարձրանում
 Քարոտ թիկունքից Չաթինդաղ լեռան,
 Նոր է արեւը պռունկը¹ հանում,
 Գիւղիցը մօտիկ քարափի զլխին
 Մի խումբ իզիթներ, ահա զայրացած,
 Հրացանները բռնած ձեռքներին,
 Խօսում են տաք-տաք և նայում են ցած:

¹ Պռունկ—շուրթ, ծայր.

Գիւղումն աղմուկ է և իրարանցում,
 Կրտերներին են կանայք հաւաքուած,
 Տղերքը դէպի քարափն են վազում
 Հրացանների կիսերից բռնած:

XXVI.

Եկաւ վիթխարի ծերունի մի մարդ,
 Կանգնեց խռոված տղերանց միջին,
 Մտառ դէպ ձորը մեկնելով հանդարտ
 Այսպէս խօսեցաւ զօռ տալով չիբխին¹.—
 «Երբ որ հաջեցին շներն այս զիշեր,—
 Վաղուց էր անցել զիշերուան կէսը,—
 Երկու մարդկային սև կերպարանքներ
 Հողերովն² եկան, ցած իջան դէսը»:
 Այս որ լսեցին դէս ու դէն ցրուած
 Տղերքը ճիւղով ձորը ներս մտան,
 Եւ մըտի տակին, ճամբիցը ծռուած
 Երկու մարդու թարմ ոտնատեղ զտան:
 — Այն անգգամինն է այս ոտնատեղը,
 Տեսնում էք, ինչպէս հողում նամակուշտ

¹ Չիբուխ—ծխաքար: ² Հողեր—գիւղերում առհասարակ կոչվում են վարելահողերը, արտատեղերը:

Խորն է զնայել նրա պճեղը,
Իսկ արխաւորը Սարոյինն անշուշտ» :

XXVII.

Ամբողջ մի ամիս խումբը զինավառ
Սարեր ու ձորեր ստնատակ տունց
Հովիւ Սարոյին զանելու համար,
Որ սարիցն եկաւ Անուշին փախցրեց:
Մի ամսից յետոյ վերադարձաւ աուն
Գովելով նրա արարքը ձարպիկի,—
«ճալալ է տղին,—սյ իղիթութիւն,
Ահա, թէ ինչպէս կը փախցնեն աղջիկ:»
Մենակ Անուշի եղբայրը—Մօսին
Չը վերադարձաւ, և երգուել էր նա,
Որ, ուր որ լինին, նրանց միասին
Գանի կոտորի, սիրտը հովանայ:

XXVIII.

Եւ զիւղացին երգ յօրինեց,
Գովեց հովելին ու եարին,
Եւ երգելով տարածայնեց
Այս արկածը սիրային:

Երգեց սիրոյ հալածանքը
Եւ արարքը սիրողի,
Եւ կամապաշտ կղբօր ջանքը,
Բարկութիւնը անտեղի:
Երգեց հայրը, երգեց որդին,
Իրան տանը և հանդում...:
Եւ ամեն անցք իւր յետնորդին
Նա երգով է աւանդում:

XXIX.

Անցաւ մի ամիսն. և ահա մի օր
Քաղաքների հետ, իրիկնապահին
Անուշը եկաւ ախուր, զլխակօր.
Հարեանութիւնն հաւաքուեց զլիսին:
Աստուած խնայեց.—նրա կըլայրը
Դեռ ևս հանդից չէր վերադարձել,
Իսկ խոժոռագէմ ալևոր հայրը
Սկսեց փրփրած թքել-անիծել.—
«Դուրս զնա, կորի՛ր, սյ լերբ, անղգամ,
Սև ու սուղ լինի թագ ու պսակդ,
Կորի՛ր, չերևաս աչքիս միւս անգամ,
Գնաինը մանի երկար հասակդ...
Տեսար, որ նրան ատում է Մօսին,

Տեսար չեն ուզում նրան Հէրնոմէրդ,
 Դու քանի՞ գլուխ ունես քո ուսին,
 Որ վեր ես կենում փախչում նրա հետ...»
 Խռնուած գիւղացիք կառուրից իջան
 Հանգստացնելու բարկութիւնը հօր,
 Յայտնուեց նոյնպէս զիւղի քահանան,
 Մի պատկառելի հսկայ ալեօր:
 Անուշը կանանց խմբի մէջ ընկած
 Դեռ հեկեկում էր, լալիս դառնազին,
 Եւ ժողովուրդը սանից դուրս քնաց—
 Խոստովանեցնի տերաէրն Անուշին:

XXX.

Մի կարճ քարոզից յետոյ քահանան
 Սիրուն Անուշին յորդորեց այսպէս,—
 «Արդեօք ճշմարիտ սիրո՞ւմ ես նրան,
 Թէ խարեց զօրով փախցրեց նա քեզ:
 Մի փախիր, ասա՛, եթէ սիրում ես,
 Ձեզ կրպսակեմ, միամիտ մնա,
 Եթէ չես սիրում ինձ յայտնիր նոյնպէս,
 Որ յանցաւորը պատիժն ստանայ:»
 Երեսը ծածկած սաստիկ ամօթից,
 Լցուած աչքերը զեափն խոնարհած,

Անուշը կամայ՝ ձեռքերի տակից,
 Խօսաց զողալով, իրան կորցրած.
 «Իմ կամքով փախայ... սիրում եմ, տերաէր...
 Ձէ՞ որ ասացիր մեզ կրպսակես. . .»
 —Սյն ո՞չ էր արդեօք, անսէք ի՞նչ մարդ էր,
 Որ դուրսը յանկարծ աղմկեց այսպէս.
 Դուռը շառաչեց, մարդիք խուժեցին,
 Եւ յառաջ անցաւ մի թուխ պատանի,
 Գունատուած հարցրեց զիւղացիներին—
 «Սյստե՞ղ չըհասու ձայնն հրացանի.»
 Չարհուրեց ամբօխն և աղաղակեց
 Խառըն ձայներով, ի՞նչ եղաւ ձորում...
 Ի՞նչ հրացան էր... ինչո՞ւ տրուաքից...
 Ծուտ արա, ասա՛, էլ ինչ ես լռում...»
 Պատանին խօսաց—«Հէնց այսօր ծէքին
 Մօսին Սարոյին ձորում պատահեց...
 Գնտաիր զիսպաւ Սարոյի կրճքին,
 Թիկունքիցն անցաւ.» ասաց ու լռեց:
 Կարճեւ մի կրճքից ողջ միաբերան
 Բացակաչեցին ձայնով արամու թեան,
 «Մէյ, ափսոս իզիթ, որ կորաւ իզօր...
 Անձու, Անձու, ջուր հասցրէ՛ք, ջուր...»

Ինչպէս մի հեղեղ վեր կենար յանկարծ
 Երկնքի մթնած ամպերից իջնէր,
 Ինչպէս փոթորիկ սաստիկ սրընթաց,
 Գիւղից սլացան մի խումբ կարիճներ:
 Յաւից տաքացած ոչինչ չին հարցնում,
 Թռչում են, որպէս ահից հալածուած
 Եւ նրանց առջև ահռելի բացվում,
 Թշուամ է ձորը արիւնով լցուած:
 Նրանց ետեից արըմբարըմբալով,
 Այե.որ միբքով դնում է ծերը,
 Ուղբերը սուր-սուր քարերին տալով,
 Շուա-շուա սրբելով ջրոտ աչքերը:
 Ծերունու հողին ալեկոծում է
 Արդէն կատարուած դէպքը ցաւալի
 Եւ դառն աղէտը, որ սպասում է,—
 Վրէժինսդուծիւնն անխուսափելի. . .:
 Գիւղը դատարկուեց մի ակնթարթում,
 Քարափի գլխին կանգնեց անհամբեր.
 Լճու, սրտատրոփ ականջ են դնում,
 Նայում են ներքեւ. ձայն չէ գալիս դեռ...
 Միայն Ձորագեան է անդնդում յուզուած
 Խլածայն ողբով վաղում դէպի ցած:

Եւ մարդասպանը դուրս եկաւ ձորից.
 Մոլոր է յողթական նրա քայլուածքը,
 Սարսափ է ընկնում արնոտ աչքերից
 Եւ խառնուած է հպարտ հայիացքը:
 Առանց նայելու մարդկանց երեսին,
 Առանց խօսալու, սեւակնած, դաժան,
 Մօտեցաւ սրահին, կախ տուեց սնին
 Սեւ հրացանը սեւ օձի նման:
 Պապանձուեց նոյնպէս ամբօխը մեխուած,
 Ոչոք ծպրտալ չի համարձակվում,
 Միմիայն մէկը անզուսպ կատաղած
 Աղաղակում է, երեսը պոկում:
 Մեռած իզիթի ծեր մայրիկն է նա,
 Հաւար է կանչում, բարձրաձայն յալիս.
 Տարաբախտ ծնող, վաղում է ահա,
 Ձորիցն է նորա գոռօյը գալիս:

Սգաւոր կանայք նորա ետեից
 «ձարայ» կանչելով ձորը վաղեցին,

Իրանց կորցրածն էլ յիշելով նորից
 Դիակի շուրջը կարգով շարուեցին:
 Իգիթին վայել սրտառուչ ողբով
 Լաց ու կոծ արին ձէն-ձէնի առած,
 Տղերքն էլ տրտում, կորացրած զլսով
 Մնացին մօտիկ քարերին նստած:
 Ողբացին անշունչ դիակի վերայ
 Անտէր մնացած ոչխարի մասին,
 Անսիրտ անէծքով յիշեցին նորա
 Անճար մնացած խեղճ հարի մասին:
 Եւ նրա մասին, որ ընկերները
 Հանդը գնալիս Սարօ կըկանչեն,
 Որ սարից փախած սոված շները
 Պիտի կտերը ոռնան, կըլանչեն:
 Ծանրը չոմբախը, զլուխը մեխած,
 Օճօրքում դրած պիտի մրտտի,
 Երկայն խանչալը պատիցը կախած,
 Պատենում մնայ և ժանդը պատի:
 Որ հով սարերի սովորած նանը
 Էլ սար չի գնալ առանց Սարոյի,
 Սև շորեր հագած կընտտի սանը,
 Տեսած օրերը միտը կըբերի...
 Եւ իւրաքանչիւր յիշողութիւնը
 Կարատում էին սիրտը խեղճ նանի,

Եւ աղաչում էր վշտալի կինը—
 Մի անգամ խօսայ, աչքը բաց անի.
 Բայց չէին բացվում որդու աչքերը
 Իսկ շրթունքները չօրացել էին,
 Նրանց արանքից բաց ատամները
 Միպտակ շարքերով երևում էին:
 Եւ ողջ մայրական անխելք ու տկար
 Աղաչանքներն ու հեկեկանքը
 Անկարող եղան վերստին բառնալ
 Յաւիտեան դրուած մահու փականքը:
 Ապա կատաղած յանդուգն անէծքով
 Նա յարձակուեցաւ երկնքի դիմաց,—
 Եւ հայհոյում էր և կուրծքը կոծում:
 Եւ ողբում էին ձէն ձէնի առած:
 Գիշերը հասաւ, սաստիկացաւ մութը,
 Եւ նուազեցան նրանց ձայները,
 Բոլորը լռեց, մենակ Դեբեդը
 Անդուլ սղում էր նաև զիշերը:
 Սգւոր գետը—
 Ծեր Դեբեդը,
 Սիրտը քրքրած,
 Զուրը փրփրած,
 Քարոտ ափին—
 Լեռ քարափին

Դեռ ծեծում է,
չեծեծում է:

XXXIV.

Արդէն մի քանի օրեր են անցել,
Զորումն ընկած է զիսկը հովւի,
Ընկած է գեանին, անթաղ է մնացել,
Եւ չի ցամաքում աչքը սգւորի:
Իգիթը անթաղ ընկած է ձորում:
Էլ չի տեսնելու նա հանգստարան,—
Հայրական զիւղին սարսափ է տիրում,
Բոլոր զիւղացիք մերժում են նրան:—
Մի զեղնաթիկունք ճերմակ ձիււոր
Գիշերն երազում յայանել է մէկին,
Որ զգուշանան Աստուծոյ ցասումից—
Գիւղը չբերեն այն աւազակին:

XXXV.

Եւ մի քանի ընկեր աղերք
Դերեգի ճոխ ավերին
Փոս փորեցին ու սրտաբեկ
Ամփոփեցին հովուի զին:

Մաղիկները այս հանդիսին
Բուրմունք առին զիւրեկան,
Զորագեան էլ ահեղաձայն
Երգեց վսեմ շարական.
Եւ աղերքը տխուր ու լուռ
Վերադարձան դարձեալ տուն,
Զորում թողած մի սև բըլճո՞ր—
Մի գերեզման անանուն:

XXXVI.

Տխուր զրոյցը տխրաբեր անցքի
Սյստեղ է մարդկանց համար վերջանում,
Սակայն զղայուն սիրտը պօէտի
Տակաւին ուրիշ վեշտ է վրդովում:
Եւ ի՞նչ.—մի սուղ է մեռելին բաժին
Եւ մի ողորմի, նրանից աւել,
Թէ չի մոռացվում, և սրտից միջին
Կարող ես նրան յաւիտեան պահել.
Բայց ե. նրա հետ, մտքից չըհանես,
Նայիր այն տեղին ուր ապրել է նա,
Տես ում է թողել, ումնից բաժանուեց,
Եւ ով է այնտեղ չարչարվում հիմայ:—

XXXVII.

Ինչո՞ւ ես, ո՞վ կոյս, դու այգբան տրտում:
Այդ ինչ թախիժ է քո դէմքը պատում,
Կամ ինչ նախատինք ճակատդ ամօթխած
կորայնում է յած:

Ինչո՞ւ ես, ո՞վ կոյս, այդպէս անտարբեր,
Երբոր քո սիրով բիւրաւոր սրտեր
Վառուած ճղնում են ոտքերիդ փարել,
չըզխան սիրել...

Ահա գարունը, ծաղկունքը բացուած,
Ի՞նչու քո սիրտը մնում է փակուած
Եւ քո ժպիտը չէ բացվում, ո՞վ կոյս,
որպէս արշալոյս:

Ինչո՞ւ յամաքած շրթունքդ ոչ սէր
Այլ մրմնջում են մահու աղօթքներ,
Թո՞չնում է դէմքիդ արտօսրից այրուած
վարդը նորաբաց:

Տխուր աչքերդ, որ մեզ չեն նայում,
Արդեօք ո՞ր երկրում ինչ են փայփայում—
Վաղեմի յնորք... կարօտած պատկեր...
Թէ ուրիշ—նոր սէր...

Ի՞նչ ես մտածում այդպէս ուշաբարձ
Եւ զարհուրելի ծիծաղում յանկարծ...

Ինչո՞ւ ես լալիս... այդ ո՞ւր ես գնում...
Ի՞նչ ես որոնում...

XXXVIII.

Անյուելի վըշվշում է
Պղտոր ջուրը Դեբեդի,
Նրա ափին կանաչում է
Անշուք շիրիմն իզիթի:
Եւ այն բոլոր ծաղկունքն աճած
Նորա ըզձերն են թաղած,
Իւր նորահաս կարի աչաց
Արտասուքով ողողած:
Եւ հոսում են զիշեր-ցերեկ
Արցունքները հէգ կարի,
Բայց անտարբեր աղան երբէք
Չի կրեում... մխիթարի:
Վշվշում է գետը—վճշ, վճշ,
Եւ յորձանք է տալիս յորդ,
Եւ կանչում է «արի՛ Անուշ,
Արի տանեմ կարիդ մօտ»:

Ե Խ Թ Ը Մ Ը Բ. ¹

(Ազգային աւանդութիւն.)

Ծիծաղախիա Վանայ ծովի
Փոքրիկ զիւղեց առափնեայ
Ծովն է մանու՛ւմ գազաագողի
Ամեն զիշեր մի սղայ:

Ծովն է մանու՛ւմ առանց նաւակի,
Բազուկներով առնացի
Զուրը ճեղքու՛մ, լող է տալիս
Իէպի կղզին զխմացի:

¹ Աւանդութիւնը լսել եմ պ. Տ. Փիրումեանից, որ մի քանի տարի ապրել է Վան:

Խաւար կղզուց պարզ ու պայծառ
Մի լոյս կանչու՛մ է նրան,—
Մի վառ փարոս նրա համար,
Զբմոլորի որ ճամբան:

Ծփում է ծովն ալեծածան—
Ծփում է սիրտը արդի,
Գոռում է ծովն ահեղաձայն—
Նա կռւում է կատաղի:

Ոչ մի վտանգ նա չէ հարցրել
Ոչ մի զիշեր մթնազին,
Միայն ճգնու՛մ է շուտով հասնել
Երեւոյսը կրրակին:

Սիրուն Թամարն ամեն զիշեր
Սյնպէս կրակ է անում
Եւ սպասում է անհամբեր
Սյնաեղ մօտիկ դարանում:

Ծփում է ծովն ալեծածան—
Ծփում է սիրտը արդի,
Գոռում է ծովն ահեղաձայն—
Նա կռւում է կատաղի:

Եւ Թամարը սրտատրոփ
Արդէն լսում է մօտիկ
Ձրի ճեղփիւն, և ողջ մարմնով
Խանդից պրփում է սաստիկ:

Լոեց յանկարծ. և ծովափին
Երեւեցաւ մի ստուեր. . .
Ահա և նա. . . իրար գտան. . .
Կասկածաւոր լուր գիշեր:

Միայն ալիքը Վանայ ծովի
Մեղմիկ զիպչում ավերքին,
Նըժըժըտելով հեռանում են
Շշուկներով անմեկին:

Նրանք կարծես փոփսում են. . .
Եւ ասողերը կամարից
Միաբերան բամբասում են
Կիրբ, անամօթ Թամարից. . .

Բամբասում են կուսի սրտում:
Եւ դարձեալ մութ գիշերով
Մէկը խաւար ծափն է մտնում
Միւսը ահից դողալով

Ծունկ է չոքում լուռ ծովզօրին,
Եւ ահանջը խոնարհած,
Նեռւում է ջրի ձայնին,
Որ հեռանում է կամաց. . .

Միւս գիշերը, նոյն ժամանակ,
Էլ նոյն կրակն է վառվում,
Եւ կրակի շուրջը դատարկ
Էլ նոյն անցքն է կատարվում:

Բայց Թամարի հօր հարևան
Մի քանի մարդ չարասէր
Նրանց գաղանիքը իմացան,
Եւ ամպամած մի գիշեր

Լոյսը հանդցրին. լողորդն յոգնած
Մողորուեցաւ սև ծովում,
Երբոր նայեց, սևսաւ հանգած,
Փարոսն էլ չի երևում:

Լոյսը հանդցրին չար գիւղացիք
Եւ կանգնած են լուռ ու մունջ.
Դէպի ավերն այն ուղղածիք
Նեռուից հողմը դառնաչունջ

Բերում է ձայն կիսամար—

«Այս Թամար...»

Մօտ է ձայնը, խօլ խաւարում,

Ժայռերի տակ սեպացած,

Ուր ամեհի ծոփն է գոռում,

Մերթ կորչում է խլացած,

Մերթ լսվում է ուժասպառ—

«Այս Թամար...»

Առաւօտեան ծովը ծփաց—

Ափը ձգեց մի գիակ.

Նրա դէմքը այլանդակուած,

Կարծես, մեռած ժամանակ

Մրմնջում էր անբարբառ—

«Այս Թամար...»

Այն օրուանից դրա համար

Կղզին կոչուեց «Այսթամար»:

1891 թ. դեկտ. 31.



ՄԵՐԺԸԾ ՕՐԵՆՔ.

I.

Բարձրադիր լանջում բարձր սարերի
Աղօթք է անում լուռ կանգնած մենակ
Հին յիշատակը հին հին դարերի—
Քրիստոնէից միանձանց մի վանք:
Նրա սրտածայր դմբէթը քարեայ
Բարձրանում է վեր—դէպի երկինքը,
Խաչակնքելով աշխարքի վերայ
Օրհնում է մշակի արդար քրտինքը:
Այնտեղ խստակեաց միաբանութիւն
Ճգնում է միաքր աղօթքի տուած,
Անհաղորդ երկրի վայելքին ունայն,
Մինչև որ խր մօտ կրկանէ Աստուած:

Ձեն լսվում երբէք սուրբ Հայրերի մօտ
 Մարդոց խնջոյքի ուրախ երգերը,
 Եւ ոչ կանացի հայեացքը խանդոտ
 Յուզում է մեղքով խաղաղ սրտերը:

II.

Երեք օր առաջ վաղ առաւօտեան
 Յամբրնթաց մի սայլ մօտեցաւ վանքին.—
 Տե՛ռու կողմերից ուխտաւորք եկան
 Երկրպագելու սրբոց մասունքին:
 Եւ զզրվալով բարեպաշտ մարդկանց
 Առջև բացուեցան դռներն Ասածոյ տան,
 Եւ մի ահաւոր երկիւղով լցուած,
 Խաչակնքելով նրանք ներս մտան:
 Սուրբ կամարները, սեւացած արդէն,
 Մի անգամ դարձեալ ծածկուեցան ծխով.
 Ծխի մէջ վառուող մոմերի առջև
 Ծունկ չոքած աղօթք արին երկիւղով:
 Զօհր զինեցին և բաժանեցին,
 Ապա սրբազան նուէրներ ասրան
 Այն աղօթարար միաբաններին.—
 Մեղքի թողութիւն, օրհնութիւն առան:
 Բայց կատարուեցաւ այլ մեծախորհուրդ

Ուխտ և ողջակէզ կեանքի հաշտութեան,
 Փրկեց ակներև մահից մի հոգի,
 Որ պիտի անմեղ կորչէր յաւիտեան:
 Ոչ արիւն թափուեց, ոչ հօշ բարձրացաւ,
 Ոչ տեսանելի կանգնեցաւ սեղան,
 Տոգիները միայն անձայն խօսեցան—
 Վերածնուեցաւ մատաղ արեղան.
 Եւ մաշուած կրճքում կրքերը մարած
 Աւելի սաստիկ եռացին նորից,
 Իսկ այն ընտանիքն, ուխտը կատարած,
 Դուրս դնաց արդէն վանքի դռներից:

III.

Մարդոց մեղքով լին շէներից հեռու,
 Սուրբ անապատը զիշերուայ մթնում,
 Ինչպէս մի հսկայ, ահուկի ուրու,
 Ահա կանգնած է ահաւոր, արտում:
 Նրա խցերից մէկում միայնակ
 Մի երիտասարդ, ամբողջ, դալկահար,
 Զիթի ճրագի աղօթ լուսի տակ,
 Անկողնում անքուն տանջվում էր երկար:
 Հազիւ հեռացան յախուռն մաքերը,
 Որ քունն աչքերին մօտ չէին թողնում:

Հագիւ ծանրացան արտեանունքները—
 Քնեց արեղան իւր կոշտ անկողնում,
 Եւ յանկարծ կանգնեց նրա զլխի մօտ
 Լուսեղէն մարմնով մի կոյս երկնածին,
 Կարեկցութեամբ լի, բայց սաստիկ կրքոտ.
 Աշխոյժ հայեացքով նայեց քնածին:
 Նայում էր առ ժամ և կամաց-կամաց
 Հասուն, լի կուրծքը ուռչում—
 Իջնում էր, Կարծես՝ երեսին մեղմածուփ ալեաց
 ձերմակ փրփուրը խաղալիս լինէր:
 Ապա շնորհալի և խիստ հեղանազ
 Շարժուածքով ճկուն մէջքը խոնարհեց,
 Եւ տաք համբոյրով վարդերանգ շրթանց
 Քնածի տխուր ձակասը պրեց:
 Զարթնեց արեղան, և զգաց հոգում
 Մի ցաւ, որ սաստիկ տանջում էր իրան.
 Այն ինչ պրեկու ոգին երկնքում
 Փայլատակում էր մի աստղի նման:
 Դուրս նայեց տեսաւ նորեկ արեւը
 Երկնքի ծայրը հրդէհ էր ձգել,
 Նայեց աշխարքին, նայեց վերեւ,
 Եւ ուղեց խկոյն բոյորը գրկել. . .

Փոխուեցաւ այսպէս վանականն անմեղ,—
 Իւր խուցը դարձաւ առաւել նեղզիկ,
 Եւ մեղմ աղօթքի անդորրութեան տեղ
 Յայանուեց հոգում անծանօթ մրրիկ:
 Ո՛վ զարմանք, արդէն սիրկի սրտով
 Մի զիշերուայ մէջ կարօտել էր նա,
 Եւ ամստում էր, թէ ինչու շուտով
 Գնացին վանքի հիւրերն երեկուայ:
 Կարօտել էր նա, և նրա աչքին,
 Քաւութեան ձերմակ շապիկը հագին
 Միշտ երևում էր այն դերպաստանի
 Վայելչահասակ զուստըրը դեղանի:—
 Երևում էր նա զխափօր չոքած
 Լուռ աղօթելիս սեղանի առաջ,
 Կամ այստեղ նստած, կամ այնտեղ կանգնած
 Թախծալի, քնքոյշ դէմքով սիրասանջ:
 Ամենայն սնգամ նորա սեղերին
 Մօտիկ զնալիս, կամ թէ կանգնելիս
 Ծնկներն ու սիրտը դողդողում էին,
 Եւ մարմնին ախորժ թմբիլ էր գալիս:
 Երկար ժամերով քարացած—անշարժ
 Մի տեղ մնում էր նստած զխաքարը—

Ապրում էր մտքում երազած օրով,
 Եւ ցնորմունքից ուշաբերուելով
 Յաճախ անհանդիսա նա չարչարվում էր,
 Լալիս էր ծածուկ, վանքից կորչում էր,
 Եւ կատաղում էր, որ մի մարդ չքկար
 Իւր ցաւն սփռիէր, կամ զէթ հասկանար...

V.

Արդէն հրեղէն գունդն արեգակի
 Ուժասպառ, յողնած դէպի մայր թեքուեց.
 Փուլ եկաւ դարձեալ սիրան արեղայի—
 Գիշեր է հասնում: նա արտում երգեց.—

«Արևը թռաւ.
 Թոցըրեց, տարաւ
 Փայլուն շողերը.
 Խաւար գիշերը
 Ծանրացաւ ահա
 Դաշտերի վերայ:
 Գերին արևի
 Գլուխը դէպի
 Արևմուտ ծռած
 Մնաց սալարած:
 Սպասում է նա,

Թէ երբ կերևայ
 Երկնականարից
 Արևը նորից:
 —Ախ, շուտով բացուիր,
 Արև կենսաձիր.
 Գուրգուրիր կրկին
 Արևածաղկին:

«Տեւացար և դու,
 Անյայտ սիրատու.
 Բոցոտ հայեացքով
 Լցրիր կըրակով
 Սիրաս վշտահար,
 Եւ քեզ հետ տարար
 Ուշքս ու միտքս...
 Մթնեց երկինքս.
 Ես էլ ծաղկի պէս
 Սպասում եմ քեզ—
 Ահա շուարած
 Գլուխս ծռած,
 Ես էլ եմ նայում,
 Քո ձամբէն սրհում:
 Ծաղիւր դու նաև,
 Իմ հոգուս արև:

VI.

Գիշերուայ մթնում նեղ լուսամուտից
 Երևում է լոյսն աղօա լամպարի.
 Իւր անձուկ խցում նստած է Հանգիւստ
 Ժիր վերակացուն Հին սրբավայրի: ...
 Կծղել են երկայն մաղ ու միրուքը
 Այն խստակրօն ծեր վանականի,
 Հանգել են աչքերն, և հեղ ծերուկը
 Չունի երեսին մի զիծ կենդանի:
 Արդէն չորացած երկայն մասներով
 Իւր սև համրիչի հատերն է քաշում,
 Եւ խաղաղութեամբ, դրախտի յուսով
 Կեանքի մնացած ժամերը հաշվում:
 Մահի հարուածից նա չի սարսափում,
 Եւ բան չի խլում մահը նրանից, —
 Երկրի հետ նրան ոչինչ չի կապում,
 Ողջ սպասում է նա զերեզմանից:

VII.

Փաբրիկ զոնակը զգոյշ բացուեցաւ.
 Մի մեռելափոս, բայց երիտասարդ,

Աչքերը վառուած սևաշոր մտաւ.
 Եւ հարցրեց նրան ծերուկը հանդարտ. —

ԾԵՐ ՎԱՆԱՅԱՅՐԸ.

Ի՞նչ ունես, որդեակ:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՌԵՂԱՆ.

Հայրիկ, ներիր ինձ,
 Այսպէս տարածամ որ քեզ մօտ եկայ.
 Սիրտս ուզում է դուրս թռչել տեղից...
 Այլ ևս համբերել չեկարողացայ...

ՎԱՆԱՅԱՅՐԸ.

Համբերութիւն տայ թող Բարձրեալը քեզ.
 Բայց ինչո՞ւ համար յուզուած ես այդպէս:

ԱՌԵՂԱՆ.

Ինձ ասան, հայր սուրբ, դադանիքը կենաց
 Արդեօք օրէնք է Ասածուց սահմանած...

ՎԱՆԱՅԱՅՐԸ (ընդհատելով).

Այ՛ո, Տէր Աստուած աշխարքին, որդեակ,
 Ապրելու համար տուել է օրէնք,
 Եւ մենք սրբութեամբ, ինչպէս օրինակ,
 Այն օրէնքները պիտի կատարենք:

ԱՅԵՂԱՆ.

Կատարենք, հայր սուրբ... ապա, երբ որ կայ,
Խնդրում եմ Տիրոջ այն սուրբ օրէնքով,
Որով ապրում են մարդիկը Նորա,
Նաև մարդկային իմ իրաւունքով... .

ՎԱՆԱՏԱՅՐԸ (ընդհատելով).

Էլ ի՞նչ իրաւունք... դու պաշտօնեայ ես,
Մի սպասաւոր Աստուծոյ տանը,
Պիտի տաճարի սեղանին նայես,
Աղօթես, ճգնես. այս է քո բանը.
Եւ դրա համար չես մնալ անմաս—
Բոլորի վարձը այնտեղ կ'ստանաս:

ԱՅԵՂԱՆ.

Ես ծառայում եմ, և իմ պաշտօնում,
Տեսնում ես, ահա, պահասաւոր չեմ:
Երկնքի վարձը չեմ արհամարում,
Բայց մի՞թէ երկրում ես պիտի կորչեմ... .

ՎԱՆԱՏԱՅՐԸ.

Մի մաղ չի կորչել զլիտի մաղերից.
Մի՛ սնուցանիր սրտումդ կասկած:

ԱՅԵՂԱՆ.

Սակայն չէ՞ որ մեզ այս լեռ քարերի
ձգնութեան համար չըսակցծեց Աստուած:
Իմ օրերն այստեղ ախուր են անցնում:
Վառվում է սրտումս հուրը կենսական,
Ինչո՞ւ էք նրան դուք զօրով հանգցնում
Մահաշունչ զրկում խուլ առանձնութեան.
Կարօտ է հողիս, թռչում է հրաթև
Սյս մենաստանի բարձր պարսպից,
Չեմ կարող մնալ ևս այսուհետեւ,
Եւ երբէք, մինչդեռ զրկուած եմ կեանքից...

ՎԱՆԱՏԱՅՐԸ.

Սյստեղ է կեանքը, այս սուրբ յարկի տակ.
Աղօթի՛ր, ճգնի՛ր, կրգանես, որդեակ:

ԱՅԵՂԱՆ.

Չէ, չեմ գտնում, հայր, աղօթքների մէջ
Եւ ոչ հողերու լս մեղեդիների,
Դարձեալ մտում է նա սաստիկ մի տենչ,
Մի տենչ անկատար, անհասկանալի.
Սարսափում եմ ես.— մօտ է վտանգը—
Իմ մահն ինձանից մօտիկ է, մօտիկ.

ԱՌԵՂԱՆ.

Կատարենք, հայր սուրբ... ապա, երբ որ կայ,
Խնդրում եմ Տիրոջ այն սուրբ օրհնքով,
Որով ապրում են մարդիկը Նորա,
Նաև մարդկային իմ իրաւունքով...

ՎԱՆԱՅԱՅՐԸ (ընդհատելով).

Էլ ի՞նչ իրաւունք... դու պաշտօնեայ ես,
Մի սպասաւոր Ասարծոյ տանը,
Պիտի տաճարի սեղանին նայես,
Աղօթես, ձգնես. այս է քո բանը.
Եւ զրա համար չես մնալ անմաս—
Բոլորի վարձը այնտեղ կ'ստանաս:

ԱՌԵՂԱՆ.

Ես ծառայում եմ, և իմ պաշտօնում,
Տեսնում ես, ահա, պակասաւոր չեմ:
Երկնքի վարձը չեմ արհամարում,
Բայց մի՞թէ երկրում ես պիտի կորչեմ...

ՎԱՆԱՅԱՅՐԸ.

Մի մաղ չե կորչել գլխիդ մազերից.
Մի՛ անուցանիր սրտումդ կասկած:

ԱՌԵՂԱՆ.

Սակայն չէ՞ որ մեզ այս լեռ քարերի
Ճգնութեան համար չըստեղծեց Աստուած:
Իմ օրերն այստեղ տխուր են անցնում:
Վառվում է սրտումս հուրը կենսական,
Ինչո՞ւ էք նրան դուք զօրով հանդիմանում
Մահաշունչ զրկում խուլ առանձնութեան.
Կարօտ է հոգիս, թուշում է հրաթև
Սյս մենաստանի բարձրը պարսպից,
Չեմ կարող մնալ ես այսուհետև,
Եւ երբէք, մինչդեռ զրկուած եմ կեանքից...

ՎԱՆԱՅԱՅՐԸ.

Սյստեղ է կեանքը, այս սուրբ յարկի տակ.
Աղօթի՛ր, ձգնի՛ր, կրգանես, որդեակ:

ԱՌԵՂԱՆ.

Չէ՛, չեմ գտնում, հայր, աղօթքների մէջ
Եւ ոչ հոգեբուխ մեղեդիների,
Դարձեալ մտում է նա սաստիկ մի տենչ,
Մի տինչ անկատար, անհասկանալի.
Սարսափում եմ ես.— մօտ է վտանգը—
Իմ մահն ինձանից մօտիկ է, մօտիկ.

Այստեղ չեմ գտնում մխիթարանքը,
Որով շնչում են, ապրում են մարդիկ:

ՎԱՆԱՏԱՅՐԸ.

Ուրեմն չըկայ, ինչ որ ուղում ես,
Եւ այդ ցնորք է, կամ փորձութիւնով
Նղովեալ չարը խորբարում է քեզ
Նոզի՞ կործանող իւր պատրանքներով:

Ա.ԲԵՂԱՆ.

Եթէ նա չըկայ, ոչինչ չեմ յարգում,
Ատում եմ և ինձ, իմ անձս միայնակ,
Ոչինչ չեմ գտնում այլ ևս աշխարքում—
Լոկ խարէութիւն և անմիտ ասնջանք.—
Թող այնուհետեւ քանդուի նա իսպառ,
Նրա երեսին էլ կեանք չըծաղկի,
Թող մեռնեն մարդիկ, թող ուտեն իրար...
Ես էլ չեմ խղձում այստեղ ոչ ոքի:
Սակայն չէ, նա կայ. անբախտ ալեւոր,
Կուրծքդ երեւի դեռ չէ եռացել,
Մենակ է աճել հասակդ բոլոր
Եւ առանց կեանքի հանդել ծերացել.
Բայց երբ սոսկալի առանձնութեան մէջ
Ինձ պաշարում է սարսափը մահու

Եւ ունայնութեան մտքերն հոգեմաշ
Ինձ երևում են ախուր, ահարկու,
Շուրջս չեմ գտնում փրկութեան նշանք
Իսկ մահը, կարծես, չորում է կրճքիս,
Միմիայն խորափոս, խաւար զերկաման,
Միմիայն դժոխքն է երևում աչքիս,
Նա այն ժամանակ վրայ է հասնում
Ինչպէս լուսաւոր շողն արեւուսի,
Փարատում հոգուս մաւրութիւնը,
Վանում մահաշունչ մտքերն մեկուսի,
Կեանքի ջերմութեամբ լցվում է սիրաս...
Եւ ես զգում եմ, որ այն քաղցր ու նուրբ
Զգացմունքով է կենդանի մարդս.
Բայց ափսոս, որ դու չըզդիտես, հայր սուրբ:

ՎԱՆԱՏԱՅՐԸ.

Այն սուրբ հոգին է, կամ մի սուրբ հրեշտակ,
Որ այցելում է, ս՛վ արժանաւորդ,
Եւ կեանքի մասին աստուածաբնակ
Այս սուրբ տաճարում քեզ տալիս հաղորդ:

Ա.ԲԵՂԱՆ.

Օ՛, չէ՛, չէ՛, հայր սուրբ, նա չէ իջնում,
Ինչպէս սուրբ հոգին, Աստծոյ խորանից,

Եւ ոչ հրեշտակի պաշտօն է տանում,
 Բայց ես շնտ հեռու, հեռու եմ նրանից:
 Ա՛խ, նա պակաս է, նա չըկայ այստեղ,
 Մերժած է անդամ նրա անունը,
 Եւ ահա դատարի, դատարի է ահեղ
 Օրէնքի պաշտպան Աստուծոյ տունը:

ՎԱՆԱՏԱՅՐԸ.

Այդ խաղաղութեան թշնամին է չար,
 Որ միշտ հեռու է ահիցը վանքի:

ԱԲԵՂԱՆ.

Նա չար չէ, հայր, այլ միակ հաշտարար
 Մարդու և կեանքի:

ՎԱՆԱՏԱՅՐԸ.

Ապա սո՛ւրբ է նա:

ԱԲԵՂԱՆ.

Սո՛ւրբ, ինչպէս Աստուած և իւր օրէնքը
 Եւ սիրելի է, որքան և կեանքը...
 Ես մեղք չեմ անում, հաւատա, հայրիկ...
 Դուք ինչու համար ինձ այստեղ բերիք:
 Ես ի՞նչ եմ արել, չէ ես էլ եմ մարդ,

Նրանցից մէկը, որ այնքան ազատ
 Ապրում են իրանց ցանկութիւններով,
 Որ ազօթում են ուրախ սրտերով...
 Ինչու համար է իմ ազօթքն այստեղ,
 Ո՞ր մեղաւորին կըտանէ եղեմ...
 Ինչու համար եմ չարչարվում անմեղ,
 Եւ եթէ այսպէս ես այստեղ մեռնեմ
 Ձեզ կամ Աստուծուն ինչ շահ իմ մահից...
 Ուզում եմ ապրել. հայր, կեանք տուէք ինձ...

ՎԱՆԱՏԱՅՐԸ.

Կեանք տալը նրա ձեռքին է, որդի,
 Մարդս ի՞նչ կանէր, որ շատ էլ ուզէր,
 Բայց աստ՛, տեսնենք իղձը քո սրտի—
 Ի՞նչ ես կամենում:

ԱԲԵՂԱՆ.

Մի աղջկայ սէր... . .

ՎԱՆԱՏԱՅՐԸ.

Պապանձուիր, ո՞վ լիւր, աչքիցս հեռացիր,
 Մի՛ ապականիր և մեր ազօթքը,
 Շուտով հեռացիր, կամ գետինն անցիր,
 Չըպզծէ տաճարի սեամբը քո սուրբ:

Քո սրտին արդէն տիրել է չարը,
 չեռացիր, Աստուծոյ բարկութիւնը տար,
 Որ չըկործանէ և այս առձառը
 Քեզ հասանելի պատուհասն արդար:
 Կամ տպաշխարհի պահքով, աղօթքով,
 չեռու հալածիր դիւական կիրքը,
 էլ այդպիսի բան չանցնի քո մտքով...
 Շէւտ, առանձնացիր, կարգա սուրբ գիրքը:

ԱՔԵՂԱՆ.

Ձէ՛, էլ չեմ կարող. հերիք եր ինչ որ
 Առանձնութեան մէջ տանջուեցի լուսած,
 էլ չի բռնանալ այս տենչատոչոր,
 Սուրբ սիրոյ վրայ քո սիրտը մեռած:
 Արդ ես համարձակ խոստովանում եմ
 Քո և աշխարքի առջև իմ սէրը,
 Եւ բոլոր հոգով արհամարում եմ
 Անցած դարերի խաւար ծէսերը:
 Դու էլ ես սպրեւ նախնեաց օրէնքով,—
 Ապրել ես միայնակ, մարդոց անօգուտ,
 Սյլե անկանոն, ցաւալի կեանքով,
 Մեղքեր ես միմիայն վաստակել հոգուդ:
 Դու էլ, հնազանդ քո նախնեաց կարգին,
 Ուխտեցիր տանել կեանքը վանական,

Բայց յաղթեց խաւար բռնութեան կամքին
 Միշտ ամենազօր օրէնքը բնութեան...
 Ձէ՛, չեմ ձանաչում, ես չեմ դաւանում
 Այնպիսի Աստուած, օրէնք անիրաւ,
 Որ անարդում է սէրն ամուսնական.
 Օրհնիր, ճերունի և մնաս բարեաւ:»
 Սիրովառ սրտի համարձակ լեզուով
 Ծերունու դիմաց խօսաց արեղան,
 Որ, բարկութիւնից սաստիկ դողալով,
 Աստուծոյ անունով նղովեց նրան:
 Եւ մեծ դարպասը լուռ մենաստանի
 Ծանրը ձոնչաց ու լայն բացուեցաւ,
 Վանքից մի հողի հեռու աւանի
 Ճանապարհն ընկաւ. օրը լուսացաւ. . .

1890 թ.



ՅՈՒՆՆ ՈՒ ԿԵՏՈՒՆ.¹

(Ժողովրդական ասանդումին)

Ժամանակով Կատուն ճոն² էր,
 Շունն էլ զլխին զդակ չունէր,
 Միայն, զիդեմ ոչ որդիանց-որդի³,
 Ճանգել էր մի գառան մորթի:
 Էկաւ մի օր, ձմրոնամըտին,
 Կատվի կուշար, տարաւ մորթին.—
 «Բար՛չազողում, ուստա Փխօ,
 Գլուխս մրսեց, ՚ի սէր Աստոյ,

¹ Այս ասանդումինը լսել եմ Լոռի և գրել տեղական բարբառով, որքան կարելի էր մեղմացնելով բարբառի կոշտումինը: ² Ճոն—զլխարկ կարող: ³ Որտեղից որտեղ:

Առ էս մորթին ու ինձ համար
 Մի զդակ կարի զլխիս յարմար.
 Վարցդ կրտամ, միամիտ մնա,
 Միայն խնթրում եմ շատ չուշանայ:»
 — «Աչքիս վրայ, քեռի Քուչի,
 Մի զդակ ա խու մի քուրք չի,
 Քու թանգագին խաթեր համար
 Ուրփաթ օրը համեցէք տար.
 Փողն մասին աւելնորթ ա,—
 Մեր մէջ խօսալն էլ ամօթ ա,
 Ինչ վինձ¹ բան ա, տօ հէր օխնած,
 Հա՛, հա՛, հա՛... մի զդակի վարց...»

*

Ուրփաթ ծէքին քեռի Քուչին
 Ուստից ծէքքին², բաց բաց կուծին³,
 Թափ թափ տարով ծանդրը ու մեծ
 Ուստա Կատվի շէմքում կանգնեց.
 «Ուստէն ո՛ւր ա... փափախս⁴ ո՛ւր ա...»
 — Մի քիչ կացի, հրէս կերեայ:

*

¹ Վենձ—մեծ: ² Ծէքք—տուս, վաղ: ³ Կուծի—զլուխ:
⁴ Փափախ—գտակ, զլխարկ:

Ուստէն էկաւ քուրքը հագին.
 Շանը տեսաւ, բեխի տակին
 Իրան իրան քիչ փնթփնթայ
 Ու մուշտարու վրայ թնդայ—
 «Ցրտատար էլմօր... վահ, անաշէն,
 Ձեռ թողնում, որ մի շունչ քաշեն.
 Սհաթ խաւ չի, դեռ հլա նոր եմ
 Ցրցամ տուել¹, թէ որ կարեմ:
 — «Իէ, հեր օխնած, էթէնց² ասա,
 Էդ բարդանալդ էլ ընչիս ա.
 Փող եմ տուել, շուտով կարի,
 Թէ չէ, ասա էգուց արի...»
 Ասաւ Քուչին ու նկղացած
 Վերադարձաւ զլուխը բաց:

*

Մին էլ էկաւ, դարձեալ չըկար.
 Էս անգամը զիպան իրար,
 Էլ անպատիւ, պետուր³ խօսքեր,
 Էլ հին ու նոր, էլ հերն ու մեր,
 Էլ դող Փիսօ, էլ քաջալ Շուն...
 —

¹ Ցրցամ տալ—սրսկել, (ջուր սրսկել): ² Էթէնց—այդ-
 պէս: ³ Պետուր—անառակ:

Բանը հասաւ զիւանբաշուն¹:
 Մինչև շունը գնաց-էկաւ,
 Ուստա կատուն կոտորն ընկաւ²,
 Գլուխն առաւ ու մի քըշեր
 Հայդէ, կորաւ. էն գնալն էր...

*

Էն օրուանից մինչև օրս էլ
 Շունն էս բանը չի մոռացել,
 Մտքումը հլա դեռ պահում ա.
 Որտեղ կատվին պատահում ա,
 Վրայ ա վազում, մորթուց քաշում,
 Իրան մորթին եդ ա ուղում.
 Իսկ սեերես կատուն յանկարծ
 Ետ ա դանում ու բարգացած
 Փշտացնում ա, մթամ³ նոր եմ
 Ցրցամ տուել, թէ որ կարեմ:

1886 թ.



¹ Դիւանբաշի—նախագահ զատուոր: ² Սնանկացաւ:
³ Մթամ—իբրև:

Բինում լռեց աղաղակը
 Եւ հանգչում են վաստակած,
 Միայն վրանում հանգչող կրակը
 Մերթ բռնկում է յանկարծ:

Բայց հովիւը դեռ արթուն է,
 Դեռ կանգնած է արխաջում¹,
 Անքուն աչքով դեռ հսկում է,—
 Գոզից երկիւղ է քաշում:

Փայլակն ահա փայլեց կրկին,
 Նրա կարմիր լուսի տակ
 Բինից հեռու երևային
 Երկու մարդու կերպարանք:

Ամպը գոռաց ու սըրաքեց,
 Եւ անձրեք սաստկացաւ .
 Հովին «հէյ-հէյ» աղաղակեց,
 Ծունը թւից² վեր կացաւ:

¹ Արխաջ, թուրքերէն բառ է—հօտի բացօդեայ հան-
 դատումեան տեղն է: ² Այն որոշեալ տեղն է, որտեղից
 շունը հսկում է:

Մ Ի Պ Ա Տ Կ Ե Ր .

Մութը արդէն դետինն սուաւ
 Քօշաքարայ սարերում,
 Գազաթների տեսքը կորաւ,
 Եւ ողջ թաղուեց խաւարում:

Տխուր, ամպած կրկնքիցը
 Մանրը անձրե է շփում,
 Հեռու լերանց ետեիցը
 Մերթ ծովիանն¹ է խաղում:

Ահա փայլեց և մօտիկից
 Լուսափայլեց սար ու ձոր,
 Պարտուելով սարի տակից
 Գեար վաղում է պղտոր:

¹ Ծովիան—փայլակ:

Նրացանները որոտացին,
 Ոչխարն եղաւ ցանուցիր,
 Նաւարն ընկաւ, ողջ դարթնեցին.
 Մութն է զիշերն—ախնակիր:

Նեղեղը խուլ շրջփում է,
 Վայր է հոսում ~~անընդհատ~~ յորդապահի
 «Տարան... հասէ.ք...» դեռ լսվում է
 հովուի ձայնը հեռացած:

1891 թ. ապրիլի 15.



Գ Ե Ց Ի Մ Լ Ը Բ Ե Ր Ի Ո Ս.

(Ռուսերէնից).

Եւ խայտաճամուկ միմոսի շորով, Կեսարի¹ կանչին,
 Ծեր Լաբերիոսը կանգնեց կրկէսում հոովմի առաջին.
 Թնդաց հոովմը... և աթոռներից վեր կացան յանկարծ
 Աղնուականները և ժողովուրդը վախից սարսափած.
 Եւ դղրդացին արձակ կրկէսում շփոթ ու շշուշ,
 Նաղեւ լսելի խառնակ աղաղակ և դժգոհ տրտունջ.
 — «Լաբերիոսն այստեղ, և ինչպէս միմոս, այստեղ
 օրէնքով


Գերիներն իրանց կուռ շղթաների շունչիւններով
 Եւ սրի ձայնով անմահ հոովմի հրճուանքի համար
 ձգնում են ըմբշի կամ թէ միմոսի պսակ ստանալ...
 Լաբերիոսն այստեղ... բայց չէ մոռացել հոովմը նրան,—
 Նին քաղաքացի և հոչակաւոր երգիչ անմահն,

¹ Անցքը պատահել է Յուլիոս Կեսարի օրով:

Իսկ արդ կրկէսոււմ, ամբոսի առջև այսպէս նա
 կանգնած,
 Լուռ ու գլխակոր գետնին է նայում ամօթից
 կարմրած...»
 Եւ խօսակցութեան անորոշ ձայնը նրան է հասնում:
 Նա իւր աչքերը հռովմի վերայ չի համարձակվում
 Բարձրացնել այժմ—նրա բացայայտ վճռի ժամանակ:
 Այս անարդանքին ինքնաբաւական հայեացքով մենակ
 Կեսարն է նայում: Նա նշան տուեց հրամայող ձեռքով,
 Գոռոզ հռովմը լուսց վերստին: Կորացրած գլխով,
 Ինչպէս աղօթող ծանրը փորձանքի ահաւոր ժամին,
 Կանգնած է յուզուած հանդիսի առջև երգիչ ծերունին:
 Բայց նրա դէմքը առաջուայ նման փայլեցաւ վառ-վառ,
 Եւ լայն ձակատը վերստին դարձաւ հանգիստ ու
 պայծառ,
 Իժգոհ ժողովին խոհուն աչքերը նայեցին կրկին,
 Եւ նորից երգի, բանաստեղծութեան համարձակ հոգին
 հասաւ պօէսին, նրան սիրտ տուեց. նա զուարթացաւ,
 Եւ սառնութիւնը սրտիցը մինչև մատները անցաւ...
 Այլակերպուած է նա բոլորովին... մի ակնթարթում
 Նա ոգևորուեց.—նրա աչքերը կրակ են ցայտում:
 Նայում է շուրջը ընկձող հայեացքով... տարածեց ահա
 Խռովութիւնից դողացող ձեռքը քնարի վերայ:
 Ժողովը լուռ է. բոլոր աչքերը խոնարհուած են ցած,
 Ազնուականները մթին գիշերից մնայլ են նստած,
 Եւ ասպետները նստած են խրոխտ, դէմքով կնձաւալի,
 Ուրախութիւնից փայլում է դէմքը ահեղ տիրողէ:
 Նոր նշան տուեց. և ահա երկչոտ և անհամարձակ
 Լսուեցաւ ձայնը... Ծերի գողրոջուն, չոր մատների տակ

Գուլուած քնարի թրթռուն լարերը հնչեցին կամաց,
 Խորին լուութեան ժամին առաջին երգը որոտաց...
 Եւ սթափուեցաւ հռովմը նորից. մարդիկ շարժուեցին
 Եւ աշխատում են պարզորոշ լսել զայրացած երգչին:
 Իսկ ալեորը—անխիղճ անպատուած հին քաղաքացին
 Տակաւին հպարտ, արհամարանքով նայում է հռովմին:
 Նա երգում է անբաւ փառքը, մեծութիւնը Կեսարի,
 Բարձր խելքն ու տէրութիւնը, իշխանութիւնը բարի:
 Երգում է փայլը նրա յաղթութեան և մաղթում է
 կեանք,

Եւ ուղարկում է հզօր Կեսարին յարգ ու մեծարանք:
 Փառաբանում է նա ճոխութիւնը և փառքը հռովմի,
 Եւ աղաչում է, որ բաժին անեն... խինդը միմոսի:
 Նա թախանձում է, որ ողջ մտածեն ինչպէս որ ինքը,—
 Կեսարի շրթան վերայ ձանաչեն իրանց օրէնքը:
 Որ հին օրերի ազատ երգերը իսպառ լռէին,
 Եւ միշտ Կեսարի թշնամու ջանքէքն իցուր ցրուէին:
 Հայրերի գոռոզ հռովմը գլուխ խոնարհի նրան,
 հռովմում մարդիք մտածեն այնպէս—միմոսի նման...
 Յանկարծ վերաւոր երգիչը ցնցեց գլուխն ալեղարդ,
 հնչող լարերին կատաղի ձեռքով զարկեց յուսահատ,
 Աչքերում փայլեց բարկութեան բոցը, քնարը ձգեց,
 Այլևս չ'երգեց, այլ բոլոր ուժով գոռոց արձակեց
 Խեղդուելով ցաւից և բարկութիւնից ալեորը հէփ—
 «Քաղաքացիներ, իրաւունքներս կորցնում ենք, ելէք»



ՏԵՐՐՈՆԻ ԳԵՐՈՒՆԵՐ.

(Հատուած պօէմայից).

Գարունն եկաւ և թևերը
Նովիտներում տարածեց,
Նայաստանի խիստ ձմեռը
Լերանց ծայրերն հալածեց:

Ժպտաց կրկնից Արեգն աչեղ
Եւ ձիւները հալուեցան,
Նով սարերի վերայ տեղ տեղ
Վրանները շարուեցան:

Մուսարէկի դազան օրէն
Դարձեալ իջաւ իւր ուրթում,
Նրա մարդկքն առած ջիզէն՝
Մարդազօհ են պարտում:

Յանկարծ աիրեց ահ ու սարսափ
Խաղաղանիստ վայրերին,
Միմիայն երէն մնաց աղաա
Բարձրը լերանց ծայրերին:

Յարեաւ կեանքով դարնանարեր
Եւ հրձիւում է ողջ ծարօն,
Բայց չէ լսվում աշխատասէր
Նայ զիւղացու հօրօրն:—

Գարունն եկաւ, սարերն ելաւ
Աղաա քիւրդը յաղթական,
Գարունն եկաւ, իւր ցուպն առաւ
Նայ զիւղացին դաղթական:

1890 թ,



ՆՈՒԷՐ ԱՆ ԱՅ.ԷՆ.

Նորեկ գարունը լեռնական հային
Տեսաւ առապար օտար աշխարհում,
Տեսաւ մոլորուած մաքով տխրազին,
Եւ այսպէս խօսաց թախծալի սրտում։—

«Յիշում ես, պանդուխտ, քո հայրենիքիդ
Թանձր անտառը, ծառերը հսկայ,
Զքնաղ լեռները և ծաղկափթիթ
Մարգագետինը, որ այստեղ չըկայ։

«Գոչող ջրվէժը, որ ողողելով
Իջնում է գլխից մռայլ ժայռերի,
Զուարթ հաւքերը, որ ճռուողելով,
Մերթ խլացնում են աղմուկը ջրի։

«Երկրի վայրենի գեղեցկութիւնը
Եւ գեղածիժաղ երկինքը անհուն,
Նորա փառահեղ պերճ հորիզոնը
Վաղ առաւօտեան, իրիկուան պահուն...»

Եւ այն բոլորը, որ թողել ես դու,
Որ այնքան փարթամ, այնքան սիրուն են...
Օ՛ր, մի՛ արտասուելի, խորտակուած մարդու
Սրտասուքները այստեղ զին չունեն։—

Նրանք այս օտար ու սաան աշխարհում
Կրկորչեն, ինչպէս կաթիլը ջրի,
Եւ քո թախիժը, դարձեալ քո սրտում,
Մենակ քո անձը պիտի տոչորի։»

1891 թ. մարտի 24.

Կ Ա Ն 2.

Եթէ կաս, Աստուած,
 Եւ չես ստեղծել
 Արտասուք ու լայ,
 չեճել, անիճել.
 Թէ չար նախանձի
 Թոյնով մահացու
 Դու չես վարակել
 Պարզութիւնն հոգու.
 Թէ դու չես ասել,
 Որ կեանքը այսպէս
 Լինի անսպառ
 Տանջանքի հանդէս, —
 Մեղմայրու մարդկանց
 Կիրքն ամբարտաւան,
 Եթէ դու Աստուած
 Ես խաղաղութեան:

Տէր արագահաս,
 Աստուած արդարի,
 Ո՞ւր ես, եթէ կաս, —
 Ես աղօթք արի,
 Բայց սրածութեան
 Ահարկու ձայնից
 Խլացաւ խկոյն
 Իմ աղօթքն անբիծ.
 Եւ ես, վայրենի
 Կրքից կատաղած,
 Անբարիշտաների
 Քարերից փախած,
 Քո անուան յուսով
 Կուուեցի երկար,
 Պարծեցայ Քեզնով,
 Սակայն Դու չեկար:
 Էլ ինչօ՞ւ եմ ես
 Տառապում այսքան,
 Եթէ Աստուած ես
 Դու անմեղութեան:

Ինչօ՞ւ տակաւին
 Չես պատժում չարին,

- Ոյժդ է պակասում,
Թէ չենք աղերսում:
- 2 Թէ չարագործին
Դու չես տուել սուր,
Որ խաղաղ հողին
Սարսափէ 'ի դուր:
- 3 Թէ Դու չըզխես,
Որ այսանդ—երկրում
Մարդը ժպտերես
Մարդ է զիշատում:
- 4 Դէ արի՛ ու ան՛ս,
Զարկի՛ր ու շանթի՛ր,
Եթէ Աստուած ևս
Դու վրէժխնդիր:
- 1 Ինչո՞ւ չես դալիս,
Ո՛ւր ես, եթէ կաս,
Թէ դու չես տալիս
Խեղձին պատուհաս:

1891 թ. փետրվար.

Հ Ա Մ Ե Ր Գ.

Վտակը ժայռից ներքև է թռչում,
Թափ առած ընկնում քարերի գլխին,
Զարկում աւազին, շաչում է, ձչում,
ձչում անհանդիստ, փրփուրը բերնին:

Ինչպէս ծերունին ձայնով պառաւած
Զայնակցում է իւր թոռնիկի երգին,
Այնպէս է մօտիկ անտառը կամաց
Արձադանդ տալիս ջրի աղմուկին:

Սակայն բնութեան զուարթ համերգի
Անխօս ունկնդիրն յաւանանական—
Ժայռը մտախոհ, իւր անյայտ մտքի
Եակից ընկած, լսում է նրան:

1890 թ. դեկտ. 2.

Եւ ես, անգիտակ նրա խորհրդին,
Անձնատուր եղայ բոլոր ուժերով,
Մինչև որ հասայ ինձ խաբող կէտին,
Մինչև որ տեսայ յողնած աչքերով։—

Վարդերով ծածկած կորստեան անդունդ,
Քաղցրաւենիքով պատած մահադեղ,
Մարդիք յառաջ են վաղումսրտաթունդ,
Եւ օրապակաս ընկղմում այնտեղ.

Մեռելի վրայ բարձրաձայն սղում,
Վաղաժամ մահ են ողբում անդադար,
Տեսնում, շօշափում, բայց դեռ չեն զգում,
Եւ դարձեալ շուտով մեռնելու համար...

Ախ, որքան շատ են ճանապարհները,
Որ մեզ տանում են դէպի գերեզման,
Եւ ինչպէս մոլի մեր թարմ ուժերը
Մենք սպառում ենք ձեռքով սեպհական...

1890 թ. սեպտ. 30.



* * *

Դեռ անյիշելի վաղ մանկութիւնից
Անյայտ ըզձերով թռչում էի վեր,
Միաժամանակ քարշում էին ինձ,
Դէպի ստորե ախտաւոր կրքեր:

Հնազանդուեցի մոլութիւններիս,
Ոչ ոք էլ նրանց մասին չըխորհեցի,
Իսկ կեանքը զրկեց և, փաղաքշելով,
Հեշտասիրութեամբ սիրտս տողորեց:

Սակայն ի՞նչ է նա, ինձ ոչ ոք չասաց,
Մեզ ի՞նչ է տալիս կամ ո՞ւր է տանում,
Որ, մէկը միամիտ, իսկ միւսն ստիպուած,
Անվերջ սիրելով կեանք են անուանում:

*
*

X «Երբ խօսում էիր, պատմում էիր ինձ,
ես այն ժամանակ արբած քո շնչից
եւ յափշտակուած քեզ էի նայում,—
իմ հոգին մենակ այն էր զրաւում,
թէ ինչպէս էին շարժւում բորբոքուած
Թերթիկները քո վարդազոյն շրթանց,
Ինչպէս աչքերըդ արտեանունքիդ
Ստուերների մէջ, որպէս ծով հանդիսա,
Մերթ լցւում էին խոզաղ հրապօքրով,
Մերթ վաւում էին բարկութեան հրով...
Ինձ թվում էր, թէ երսողում էի,
եւ իբրև հեռուից ես լսում էի
Մի խուլ մուղիկայ և ոչ թէ բարբառ...
Ահ, նորից խօսիր, բայց երկամր, երկամր...»

1891 թ. հոկտ. 10.



*
*

Կուրծքս երբեմն եռ է զալիս և յուզվում:
ես մնում եմ անշարժ, ինչպէս լուռ արձան,
Միտքս թռչում դէպի երկինք և սուզվում
Տիեզերքի խորութեան մէջ անսահման... .

Ամիտփում է յանկարծ երկիր բովանդակի
Սիրատարփիկ կուսի կուրծքին է փարում,
Խօնարհուելով իջնում մինչև ոտնատակ—
Արհամարում արբութիւնը համբուրում... .

Յեա է թռչում և մոլորուած դեզերում
Քաղցրայուշիկ խոր անցեալի լուռ ծոցում,
եւ թրթռում արդէն լուծ երզերում,
Սառն ու ախուր շիրիմները շոշափում... .

Հետաքրքիր ցանկութիւնով թւառած
Ապագայի մթութեան մէջ խարխափում,
Եւ, մի սաստիկ տենչով լեցուն, սաւառնած
Երջանկութեան սահմանները թւածում: . .

Թռչում է միտքս,
Կորչում է միտքս,
Եւ չեմ հասկանում,
Ինչ եմ ցանկանում:

1890 թ.



* * *

Ա՛խ, ես երանի
Կայծակ լինէի.
Որոտ - ճայթիւնով
Մռայլ ամպերից
Թռչէի վերև,
Զարկէի ուժգին
Եւ պատառէի
Կամարն երկնքի,
Ցոյց տայի երկրին
Գաղանիքը վերին,
Որ տեսնէր այնտեղ
Ինչ բան կայ ահեղ,
Կամ ով է նստած
Եւ ուր է Աստուած...

1891 թ. յունվարի 13.



Ապա, այն երգն ասա՛, երգիչ,
 Որ հեծծանք է միայտը,
 Մյն սրտատանջ և մորմոքիչ
 Երգը երգիր ինձ համար:

Միրոս լիքն է լուռ վշտերով,
 Ծնւտ, այն տխուր երգն հնչիր,
 Եւ քո երգի նուրբ ձայներով
 Արցունքներըս դուրս կանչիր:

Շատ թագցրի սրտիս միջին
 Զգայազուրկ մարդկանցից,
 Սյժմ ուղում եմ քո առաջին
 Ողջ դատարկել իմ սրտից:

Դէ շուտ արա, որ ինչպէս թոյն
 Ինձ չըտանջին յաւիտեան,
 Երգի՛ր, երգիչ, և նրանք խեղոյն
 Իմ աչքերում կերևան:



Ո՛հ, խնայիցէք, մի՛ յիշեցնէք ինձ,
 Թէ ինչպէս էր նա արատաւք թափում,
 Երբ, արդէն խաբուած նեղաւոր խօսքից,
 Անձնուրաց սիրոյս էլ չէր հաւատում:

Ո՛հ, մի՛ հեշտայնէք, այդ խօսքեր են լոկ
 Եւ չեն դարձնելու կորուստս անգին,
 Անտարբեր էք դուք, դեռ ձեզ անողոր
 Բազդը չէ մատնել սիրոյ վասնզին:

Մի՛ յիշեցնէք, մի՛, թէ ինչպէս դաժան
 Մարդիք իրարից անջատեցին մեզ,
 Թէ ոնց եմ ապրում նրանից բաժան...
 Թողէք ինձ հանգիստ, — ես դո՛հ եմ այսպէս...

Ո՛հ, ես չեմ կարող չարչարուել անվերջ,
 Ուղում եմ խնդալ ցաւերից հեռի,
 Եւ մոռացութեան ալիքների մէջ
 Թաղել յիշատակն անցած օրերի:




ԼԵՐՄՕՆՏՈՎԻՑ.

Ես չեմ ուզում մարդ իմանայ
Իմ անցքերը խորհրդաւոր—
Սէրս ու վիշտս, որոնց վերայ
Խիղճս և Աստուած են դատաւոր:

Նրանց կըտայ սիրտս հաշիւ
Եւ նրանցից կըհայցէ գութ,
Եւ թող ինձ նա միայն պատժի,
Ով ցաւերիս առեց սնունդ:

Նախատինքը անմիտների
Ձի խռովիլ բարձր հողին,—
Որքան ծովը գոռայ, փրփրի,
Ժայռը կանգնած է վերստին:

Նրա ճակատը, բարձրացած,
Ամպերումն է մշտամուայլ,
Եւ մրրկից ու որոտից զատ
Միտքը ոչում չի հաւատար:



ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ ՀԵՏՐԵՆԻՔԻՑ.

Այս կրճքի տակ ապականուած,
Հեռու կեանքի ժրխորից,
Դեռ մի հնչիւն կայ պահպանուած
Իմ մանկութեան օրերից:

Եւ երբեմն պատահում է,
Որ հնչում է նա յստակ,
Կեանքի ձայնը նշկահում է—
Ես շնչում եմ համարձակ:

Պայծառ շողերն յիշողութեան
Մանում են ծոցն անցիալի,
Լուսաւորում իմ մանկութեան
Անհոգ պատկերն անձկալի:—

Ահա երկինքն իմ հայրենի,—
 հայի սրտի նման սլարզ,
 Ահա երկիրն իմ հայրենի—
 Կանաչադարդ հանապազ:

Ողջոյն ձեզ, ո՛վ ուրախ, ազատ,
 Անցած օրեր իմ մանկութեան...
 Ա՛խ, ձեզանից ինձ մի բացատ
 Անջատել է յաւիտեան:

Ահա փոքրիկ իմ քոյրերը
 Խաղ են անում միասին,
 Օ՛հ, անհանդիստ, չար եղբայրը
 Նրանց ծեծում է կրկին... . .

Մօրս ձայնը մեղեդիական
 Ահա հնչում է քնքոյշ,
 Նրա հայեացքը մայրական
 Ինձ հետևում է զգոյշ:

Ահա կանգնած է իմ առաջ
 Մեր բաղմահոզ գիւղացին,
 Մեծամորմին և քաջալանջ,
 Ծրձաղ չըկայ երեսին:

Ո՛հ, լսում եմ նրա երգը
 Միանման ու ախուր.
 Հայնարեբան նրա վէրքը
 Մեծանում է օր-աւուր... . .

Ահա թշուառ հայ գեղջիուհին,
 Գէւքը վշտօտ ու նիհար,
 Պատառոտած մի շոր հազին,
 Չարչարվում է անդադար:

Ահա ծերուկը, շարժելով
 Ալիքները առաջուան,
 Կեանքն է յիշում հառաչելով
 Եւ մանում է գերեզման... . .

Եւ պարզ սչքով ես տեսնում եմ
 Հայրենիքս ծաղկաւէտ,
 Այն ձօխ երկրից ես լսում եմ
 Անհոգ ծիծաղ լացի հետ... . .

Դալարազեղ նրա հովտում
 Ի՛նչ աղմուկ է փայրենի,—
 Գետի գոռոց և որստում
 Հաղարաւոր ձայների:

Ահա նրա լուռ, ահաւոր
Խաղաղ գիշերն աստղաշատ,
Ահա նրա հանդիսաւոր
Առաւօտը ցօղապատ.

Նրա ձորերն անդնդափոս
Եւ բարձրաբերձ քարափը,
Նրա սարերն ու յորգահոս
Սովորական տարափը.

Երբ որ կայծակը շեշտակի
Ահեղորոտ իջնում է,
Անտառապատ և վիթխարի
Լերանց կրճքին հանդուժ է,

Ինչ սիրուն է և հոյակապ
ճայրենիքս վշտակիր,
Եւ դու, մերժած սէր իմ հրատապ,
Այն լեռների մէջ հանդիր:

1890 թ. յուլիսի 5.



ԳՈՒԹԱՆԻ ԵՐԳ.

Արի՛ գութան, վարի՛ գութան,
Օրն եկել է ճաշ դառել,
Առը շուր տուր, խոփիկ դուրբան,
«Օրհնեալ է Աստուած, հօրովէ՛ր»:

Քաշի՛ր եղը, ուսիգ մատաղ,
Քաշի՛ր, քաշենք—վար անենք,
Ճիպտին արս՛, քշի՛ր հօտաղ,
Մեր սև օրին ճար անենք:

Պարտքատէրը զանգատ զնաց—
Քեօխվէն կրգայ՝ կըճեճի,
Տէրտէրն օրհնեց, անվարձ մնաց,
Կրբարկանայ՝ կանիճի:


Երեխէքրս մերի ու ակոր—
 Կրակն ածես հոտ չի դալ,
 Սոված նստած են, ամեն օր
 Հարեանը հաց չի սայ:

Պակտութիւնը սեւրես է.—
 Հալածուած եմ իմ տանից,
 Մինչև հարկ է, պարտք է, ծէս է,
 Կըլբայնեմ դութանից:

Դէ՛, քաշեցէ՛ք, դէ՛, քըշեցէ՛ք,
 Էլ մեր դառը քըրտինքը,
 Զարչարուեցէ՛ք, աշխատեցէ՛ք,
 Ողորմած է երկինքը:

Արի՛ գութան, վարի՛ գութան,
 Օրն եկել է ճաշ դառել
 Առը շուռ տուր, խօփից զուրբան,
 «Օրհնեալ է Աստուած, հօրօվէ՛ր»:

1887 թ. մարտ.



ՏԵՐՕՆԻ ԼԹԵՐՈՏԸ.

(Հատուած պօէմայից).

Արմիր ար՛նն առաւօտեան
 Պայծառ ցոլաց դէպի Մուշ,
 Ծաւարուեցաւ ծովի նման
 Մշու գաշար քաղցրայուշ:

Նրա շուրջը խոշոր դէմքով
 Կանդնած, լեռներն ահագին,
 Քնաթաթախ, լուռ աղօթքով,
 Նայում են վեր—երկնքին:

Արածանին օձապտոյտ
 Ծաղկադալար ափերում,
 Մշուշն մէջ, աղաս, անփոյթ
 Խաղ է անում, փրփրում:

Բայց հարսներ չեն յաւերժական
Խոյտաճամոնկ շորերով,
Եւ չեն եկել, որ լողանան
Արածանու ջրերով,

Որ սիզաւէտ տափաստանում
Վազվըզելով մանրաքայլ,
Երգ ասելով քաղ են անում
Մարդերի մէջ ցողափայլ:

Արեգակի շողերի հետ
Ահա շողաց և մի բան,—
«Ո՛վ զօրաւոր սուրբ Կարապետ,
Ո՛վ աւաղանդ հայութեան. . .»

Հանգիստ կայի՛ր, բարեպաշտ մարդ,
Այն խաչը չէ քո պաշտելի
Սուրբ Կարապետ շքեղազարդ
Հայոց վանքի գմբէթի:

Ծայրն է քրդի սուր նիզակի,
Որ ձօձում է մշուշում.
Ահա և ձին աւաղակի,—
Ի՞նչ արագ է նա քրշում:

Տեսաւ հեռուից քաջ ~~տէր~~ աշխարհ
Զուարթ խումբը քաղաորի,
Եւ ցոլացին սուր աչքերը
Յանկութիւնից վայրենի.

Եւ սլացաւ, ինչպէս բաղէն
Խոյանում է ամպերից,
Ահ, խեղճ կանայք, էլ ո՛ւր վազեն,
Ի՞նչ է գալիս ձեռքներից. . .

Հասաւ, ճանկեց... բռնեց թարթին
Օրիորդին ուշաբարձ,
Ասպանդակից, տաքացաւ ձին,
Եւ հեռացաւ սրնթիաց:

1890 թ.



Գնա դէպի երանաւէտ
Սյն վայրերը, ուր կեանքի հետ
Խաղ չեն անում զուարճութեան
Կամ հեշտութեան համար միայն:

Իսկ մենք ցաւով լեցուն սրտով
Սնկարող ենք միշտ անվրդով
Եւ քիւրդերի լուծը տանել
Եւ քեզ օրհնել փառաբանել:

Հեռու, ո՞վ սուրբ խաղաղութիւն,
Մենք քեզ իբրև մի լոկ անուն,
Երանութեամբ միշտ յիշելով
Պիտի կոուենք մեռցնող սրով:

1889 թ. դեկտ.



Վ Ե Ր Զ Ի Ն Խ Օ Ս Վ Բ.


Հեռու, ո՞վ սուրբ խաղաղութիւն,
Մենք քեզ համար չունենք անկիւն
.
Եւ մեր ցաւած սրտի խորքում:

Գնա դէպի այն լեռները,
Ուր որ հովիւն ու դառները
Սպահով են պատաստողից,
Մենք ազատ չենք ահ ու զողից:

Գնա, հանդիւր այն դաշտերում,
Ուր որ իրար էլ չեն տիրում
Եղբայր—մարդիկ, և հերկելով
Քեզ օրհնում են սուրբ երգերով:

Առանց հաշուի վասնում է,
 Իսկ երբ ոյժը հասնում է,
 Գերեզմանի եզերքին
 Կանգ է առնում տխրազին,
 Ափսոսանքով արտասվում,
 Յեա է նայում, և տեսնում,
 Որ ողջ կորցրել է անդարձ,
 Ինքն էլ կորչում է յանկարծ,
 Ինչպէս շունչը իւր վերջին,
 Ինչպէս հիւլէ մի չընչին:

1891 թ. յունվարի 10.



* * *

Խղճալի՜ մարդ, տողորուած
 Իրան անյայտ և կորած
 Օր ու կեանքի տենչանքով,
 Հազար ու մի տանջանքով,
 Յոյսերով միշտ անկատար,
 Շտապում է անդադար...
 Իւր գոյութեան ընթացքում
 Դիակներով է ծածկում
 Ասպարէզը իւր կոխած,
 Եւ, արիւնով շաղախած,
 Պիղծ ձեռքերով ուզում է
 Երջանկութիւն ընդունէ,
 Չի նկատում, որ ի վուր
 Եղած կեանքն էլ բռնատուր

Բարկութիւնով լցուած հոգով
 Ես ուզում եմ, որ Հէնց խկոյն,
 Տիրող կեանքը իւր վայելքով
 Դառնար ժանտախտ ու մահաթոյն...

Թող մեղաւոր հարանց շիրմի
 Վերայ օրդէքն անապական
 Ապրեն հանդիսա, և թող լինի
 Նրանց օրէնքն Աւետարանն:

1891 թ. ապրիլի 25.

* * *

Երբ տեսնում եմ, մարդ տակաւին
 Պահանջածը դեռ չի ստանում,
 Եւ յուսահատ գերեզմանին,
 Մոլորութեանն է ապաստանում:

Երբ աչք եմ ածում շուրջս ու հիռու
 Եւ չեմ գտնում խաղաղ անկիւն,
 Ուր հառաչք տանջուող գերու
 Զրտարածուէր տխրահնչին.

Այն ինչ խօսքը Մարդոյ որդու
 Արհամարուած ու մոռացուած,
 Եւ գլուխը ազատ մարդու
 Մինչև գետին խոնարհած,



Թէ Հնար լինէր միանգամ դարձեալ
Դառնալ քո զիրկը... ակ, ի՞նչ եմ ասում,
Այդ անհնար է.—արդէն Հանդերձեալ
Կեանքի ճամբան է իմ առջև բացվում:

Բայց մինչև այնտեղ, սոսկալի՜ ուղի,
Ահա բռնութիւն, պատիւ անարգած,
Ահա հառաչանք, արտասուք աղի,
Ահա սև նախանձ և սէր սակարկած...

Կրմեռնեմ և ես այս ցաւերի տակ
Ինձ հետ ամենելով շատ իղձ ու փափագ,
Իսկ այս աշխարհից և ոչ մի պսակ—
Միայն քո անմեղ քո սուրբ յիշատակ:

Մի տխրատեսիլ գուցէ գերեզման
Անցւորականից խնորէ մի բերան
Ողորմի ասել... ո՞վ գիտէ, և այն
Կըլինի՞ արդեօք, կընայե՞ն նորան. . .

1889 թ.

ՄԱՆԿԱԻԹԻՒՆ:

Երբ որ դարչելով տեսնում եմ շուրջս
Մոլեղնաց կեանքի պտակերը ցաւոտ,
Յաճախ, մանկութիւն, խռոված հոգուս
Ներկայանում ես ինչպէս առաւօտ:

Եւ մանկան նման արտասվում եմ ես,
Երբ այս օրերում, չարութեամբ լլուած,
Գեղ, սուրբ մանկութիւն, յիշում եմ ինչպէս
Երազի տեսիլք անհետ չբացած:

Ինչպէս արևի ճաճանչը վերջին
Թռչում է յանկարծ, տիրում է խաւար,
Այնպէս շողացիր և անցար կրկին,
Մնացի անդօր, ցոփ կեանքին աւար:

* * *

Մութն էր երկինքը. ոչ ոք չըտեսաւ
Բնութեան գործը վիշերուայ մթնում,
Միայն առաւօտեան, երբ որ լուսացաւ,
Մարդարտափայլ ցօղ իջել էր վաշտում:

Հողն էր պօհարը թախիճը դեմքին,
Ինչ էր մտածում, մարդիք չիմացան.
Միմիայն տողերում, երբ որ կարգացին,
Զգայուն սրտի արցունքը տեսան:

1892 թ, յունվարի 22.



* * *

Քրիստոս յարեաւ հրաշափառ,
Յարեաւ աշխարհն էլ նորից,
Դու էլ, սէր իմ, յարութիւն առ
Մոռացութեան խաւարից:

Դու, որ ազատ միտքս ու հոգիս
Կախարդեցիր այնպէս վաղ,
Յայանուեցար խոստումներով
Եւ հեռացար անյատաղ:

Արի՛ դարձեալ, որ առանց քեզ
Կեանքը դառն է և անձուկ,
Քեզ կանչում եմ որ նորողես
Մեր վայելքը վաղանցուկ:

Յիշե՛ր, որ քեզ դեռ սիրում եմ,
Եւ այժմ, ընկած պատրանքից,
Զեռքս, ահա, տարածում եմ—
Ինձ ազատիր այս կեանքից:

1890 թ.



ԳԻՇԵՐԱՅԻՆ ՄՏԱԾՄՈՒՆԵ.

Էյ աստղեր, աստղեր,
Երկնքի աչքեր,
Որ այդպէս յրուած
Շողում էք վառուած,
Գիտե՞ք թէ ինչիր
Կամ ինչ զիշերներ
Յիշեցնում էք ինձ:
Սաշեցնում էք ինձ.—
Շողում էիք դուք,
Երբ ես դեռ մանուկ,
Սշխոյժ ու կայտառ,
Ձեզ նման պայծառ.

Թըրթում էի
Եւ ցաւ չունէի.
Շողում էք և արդ,
Երբ երիտասարդ,
Անհուն յոյսերով,
Խանդավառ սիրով
Եւ միշտ ուշաՎառու
Նայում եմ հեռու. . .
Կըշողաք նաև
Շիրիմիս վերև. . .

1891 թ. յուլիսի 17.

Գ ս ե զ.



Ն Ր Ա Ն.

Ես ուզում եմ, որ ինձ նման
էլ չըսիրէր մէկը քեզ,
Բայց ասէին միաբերան,
Թէ դու, իրաւ, հրեշտակ ես:

Ես ուզում եմ, որ քո անմեղ
Սիրտը թնդար ինձ համար,
Եւ յաւիտեան վտոռուէր այնտեղ
Միայն իմ սէրը բոցավառ:

Ես ուզում եմ, որ օրն ի բուն
Ապշած նայեմ աչքերիդ,
Ինձ մոռացած, կորչեմ անհուն
Խորութեան մէջ հայեացքիդ.

Իսկ եթէ մահն այն ժամի մէջ
Ինձ մօտենար, օ սէր իմ,
Ես կուզէի քո սիրատենչ
Կուրծքդ լինէր ինձ շիրիմ:

1890 թ. հոկտ. 5.

ԳԵՐԸՍԵՆ ԵԳԸՄԵՆԻ ՄՆԸՐ.

«Մտնել — քնել.»

ՅԱՄԷԻՏ.

Ողևորոզն ընկաւ արդէն,
Եւ լռեցին նորա հետ
Սիրոյ ասնջանք, զայրոյթ ու քէն —
Կիր, Օտելլօ և ճամլէա:

Մեռաւ — քնեց, հանդստացաւ.
Որպէս աղմուկ կնկանութեան,
Մեռելութեան միջից անցաւ
Եւ չըքացաւ յաւիտեան:

Էլ չի լսուիլ նորա ձայնը
Իմաստներով ողբշունչ,
Յաւերժացաւ աստուածայինը,
Մնաց զիական անմռունչ:

Եւ կըհանդէի լուռ և անշարժ
Գերասանը քարի տակ,
Բայց կըպատմի քարն տպառած
Մըրրկալեց յիշատակ:

Եւ այցելուն պիտի կանգնէ
Շիրմի առջև փառազօշ,
Սրտի խորքից բացահանէ
Զայնով հպարտ ու դողդօշ—
«Ոսկերացի հանգիստ,
Աննաման արտիստ:»

1891 թ. յունիսի 7.



Բ Օ Մ Ա Ն Ս.

(Պ ու շ կ ի ն ի ց.)

Մի աշնանային մռայլ իրիկուն
Մի աղջիկ գնում էր անմարդ տեղերով,
Իւր անբազդ սիրոյ ծնունդը թաղուն
Բռնած դողդօշուն, քնքոյշ ձեռքերով:
Բոլորը լուռ էր. յոգնած աշխարհը
Հանգստանում էր զիշերուսայ մթնում,
Սյն ինչ ուշադիր աղջիկն իւր աչքը
Երկչոտ հայեացքով չորս կողմն էր ածում:

Եւ, հառաչելով անմխիթարանք,
Նա նայեց անմեղ այն արարածին.
«Քնած ես, մանուկ, դու իմ տառապանք...
Եւ անտեղեակ ես իմ սրտի վըշտին...»

Աչքդ բաց կանես բարձրականչ լալով,
Սահայն իմ կրճքին էլ չես կաշիլ դու.
Վազ-առաւօտեան տարաբաղդ քո մօր
Ձերմ համբոյրներին չես հանդիպելու:—

Ճչալով ի դուր կրկանչես նրան.
Աւանդ, ամօթ ինձ,—ես եմ մեղաւոր.
Դու կրմոռանաս մօրըդ յաւիտեան,
Բայց պիտի յիշեմ ես քեզ ամեն օր:
Ուրիշ ծնօղներ կրկնամեն քեզ,
Եւ կասին—դու օտար ես մեզ համար.
Իմ ծնօղները ո՛ւր են, կըհարցնես,
Սահայն չես գտնիլ ոչ հայր և ոչ մայր:

Թշուառ երեխայ, մտքով ախրագին
Կրտանջուես օտար մանուկների մէջ,
Կընայես նրանց մօր փաղաքշանքին
Մոայլուն հոգով մինչև կեանքիդ վերջ.
Ամեն ժամանակ բազդըդ կանիծես,
Ամեն անգ առուած, օտար ու մենակ,
Եւ միշտ նախատինք ու ծաղը կըլսես...
Օ՛, ների՛ր, ների՛ր ինձ այն ժամանակ:

Իեռ քնած ես դու... Թող քեզ, խեղճ մանուկ,
Այս վերջին անգամ իմ կրճքին սեղմեմ,

Օրէնքն անիրաւ, խիստ և անողոր
Մի դատավճիռ ունի մեր ընդդէմ:
Մինչև քո անմեղ ուրախութիւնը
Տարիները չեն քշիլ տակաւին,
Քնի՛ր, սիրելի, սև թախիծները
Խորթ են մանկութեան խաղաղ օրերին:»

Լուսինն անտառի ետեւից յանկարծ
Երևաց, մօտիկ մի խրճիթ տեսաւ,
Դողալով, զունատ և սաստիկ լքած
Նրա դռանը ահա մօտեցաւ,
Զգոյշ կորացաւ ու կամաց գրեց
Իւր երեխային օտարի շեմքում,
Իսկոյն սարսափով երեսը դարձրեց
Եւ անյայտացաւ գիշերուայ մթնու՛մ:



ԵՐԳՉԻ ՎՐԷԺԸ.

Մանր հեծութեան ժամանակների
Եւ ճնշումների անզգայ որդիք,
Կամեցայ սիրել, սակայն դուք բարի
Սիրտս ու հոգիս զայրոյթով լցրիք:

Բայց դրա համար ես այնպէս կերզեմ,
Որ այդ ձեր սիրտը ցաւից պատառւի,
Տխուր ձայներով կըթունաւորեմ
Հանգստութիւնը գալոց օրերի:

Յուսահատութեան թախծալի երզով
Լեզի կըգարձնեմ ձեր կեանքը բոլոր,
Եւ դուք կարասուէք լիացած աչքով,
Խնջոյքների մէջ նստած գլխակոր:

Եւ խիստ վրէժը զայրացած երզի
Ձեզ կըհեաւի մինչեւ գերեզման,
Ձեր սիրտը կայրի, հոգին կըտանջի,
Եւ կըտառապէք այսպէս յաւիտեան:

1891 թ. փետրվարի 22.

ԿՈՐՈՒՍՏԻՅ ՅԵՏՈՅ.

Խնդրի՛ր, սիրա իմ կարօտակէզ,
Սիրա իմ պանդուխտ, վշտաբեկ,
Խնդրիր նրան, որ այլ ևս քեզ
Սփոփելու չէ երբէք:

Կանչի՛ր, կանչի՛ր, գուցէ կանչես
Հնչեւները ըզձական,
Ինչպէս միտքս, ինչպէս հոգիս,
Թափանցեն այն գերեզման. . .

Իւր դրախտից գուցէ լսէ
Հառաչանքս աղեկէզ,
Մտաբերէ և ախտսէ,
Որ ես ապրում եմ այսպէս. . .

1891 թ. մայիսի 7.

ՔՐԻՍՏՈՍԻ ԵՆԵՊԵՏՈՒՄ.

Անապատի մէջ խաւար ու տխուր,
Ցրուած քարերից մի քարի վրայ
Գլխակոր նստած, մտախոհ ու լուռ
Մարդկութեան մասին մտածում էր Նա:

Նորա ճակատը մութն էր առաւել
Քան անապատը զիշերուայ մթնում.—
Նա պատրաստվում էր սէր—լոյս ծաւալել
Մարդկային կեանքի մութն անապատում..

Այնտեղ լսում էր աղմուկը մարդկանց
Անօրէնք երկրի ամեն մի ծայրից.
Ցաւում էր նորա մեծ սիրտը՝ շարժուած
Մոլութեան երգի և սուգի ձայնից.

Եւ անապատում մի քարի վրայ
Միայնակ նստած արտասովում էր Նա...

1892 Ն. յունվարի 18.



ԵՔԻԼԼԵՍ¹.

(Փոռկոզսկոց.)

Միտում կորաւ Իգա լեռք,
Մուայլեցաւ Տրոփադան,
Հուռ է մարտի Հարթափայրը,
Քնած բանակն Ատրիդեան 2:

¹ Յունաց զիւցազն Արիլլէսի ընտրութեանն առաջարկուած էր իւր օրհասի բրոշումը—կամ երկար ապրել առանց փառքի կամ երիտասարդ հասակում մեռնել փառաւոր մահով. նա վերջինն ընտրեց և, հայրենիքին հասած նախատինքը բռնալու համար, յունաց քաջերի հետ յայտնուեցաւ Տրոփայի (Իլիոնի, Տրոփադայի) պարիսպների տակ: Նա գիտէր նաև, որ Տրոյացոց արքայորդի Հեկտորի մահից լետոյ ինքն ապրելու չէ այլևս, և սակայն սպանեց Հեկտորին իւր ընկեր Պատրոկլէսի վրէժն առնելով: Այնուհետև նրան ամեն տեղ հետևում էր օրհասի մահազուշակ ձայնը: ² Ատրիդէս—հայրանունն է յունաց բանակի ընդհանուր հրամանատար Ագամեմնոն Թագաւորի:

Խաղաղ են շուրջ... առկայծում են
Խարոյկները բանակի,
Երկնորուծից ձայնարկում են
Պահնորդները մէկմէկի:

Ծագեց պայծառ լուսնեղջիւրը
Ծովի վերայ էդէյեան,
Բարձրը ասերն և աստղերը
Ծովի խորքում ցոլացան:
Դասարկ դաշտում երևում է
Մենակ կառքը Պրիամի,
Որ չեկտորի զին տանում է
Բանակիցը յոյների:

Ծովի օփին, բլրակի մօտ,
Ահա կանգնեց Աքիլլէս.
Տխուր, մռայլ ու վշտառ.
Եւ զլուխը նա թեքեց. . .

¹ Ծերունի Պրիամոս արքան, առաջնորդուելով Հերմէս դիցուհուց, գիշերով գնաց լուսնաց բանակը և ծնկաչոք խընդրեց Աքիլլէսից սպանուած որդու դիակը, մեղմացնելով անողոք դիցազնի սիրտը սրտաշարժ խօսքերով, և, ստանալով, գիշերով վերադարձաւ Իլիոն:

Նեռու կառքով նշմարում է
Պրիամոսին ծերունի,
Հացն էրեօից նա սրբում է
Իւր զգեստով ծիրանի:

Սպա հնչեց իւր քնարը.
Մեղմ է ձայնը գլցորդու, —
— «Ննկաւ, ծերուկ, քո չեկտորը,
Չանգաւ լոյսը քո հօգու:
Անդրամաքէն ու չեկարէն
Քաղաքի մօտ անդադար
Քեզ են սպասում... դարձից բոպէն
Կեանք ու մահ է նրանց համար:

Եւ տխրաբեր արշալուսին
Կրբուրէ խունկ հաշտարար,
Թաղման երգով կրհեծեծեն
Ամենայն աուն ու սաճար:
Նայր, մայր, այրի մաղթանքներով
Սափոր կածեն թանկ փոշին,
Եւ, զժոխքում, աղօթքներով
Չանգիստ կըտան հերոսին:

Օ՛, Պրիամոս, խօնարհեցիր
Գլուխդ Աքիլլէ առաջին,

Եւ այն ձեռքը համբուրեցիր,
 Որ լաց տուեց քո աչքին...
 Որդուդ մասին էր քո աղերս.
 Ա՛խ, մի՛ տրամիր, ալեղարդ,
 Մի բաղդ վճռեց երկինքը մեզ—
 Ինձ էլ ընկձեց Արամազդ:

Մօտ է ժամս. պատրաստած է
 Նեառը անդուլթ օրհասի,
 Եւ պարկուհին¹ ընդհատել է
 Արդէն օրերն իմ կեանքի:
 Դժոխքի դուռը ձունչում է,
 Կանչում է ձայնն ահաբեղի.
 —Վերջացած է, հանգաւ ջահը
 Պելիդէսի² օրերի:

Մտերիմըս շիրմի մէջ է,
 Զրկեց կռիւն ինձ հղբօրից,
 Սյտուհեաւ Աքիլլէսն էլ
 Կըհեռանայ այս երկրից:
 Օրհասն այսպէս է օրոշած,
 Որ ես ընկնեմ ծաղկելիս,

¹ Բաղդի աստուածուհին: ² Հայրանունն Աքիլլէսի:

Խորթ ափերում և հեռացած
 Պելէոսի աչքերից:

Ա՛խ, այս երկրում այլ ևս ապրել
 Նաև սիրտս չէ տալիս,
 Ուր էլ հողիս չի քաղցրացնիլ
 Ներկայութիւնն ընկերիս:
 Հեկտորն ընկաւ, նրա մահով
 Հանգստացաւ Պատրոկլէս,
 Բայց ընկերիս վրէժ ու քէսով
 Դէպի Տէնար կերթամ ես:

Էլ մի՛ սպասիր, ո՛վ Մենետի¹,
 Որդիդ չի գալ հօրանց տուն...
 Նորա առջև հելլեոսպոնաի
 Սնտակ ջուրն է աղմբիում:
 Քնած է նա... կաշկանդել է
 Մահը քաջին աննահանջ,
 Էլ չի ուռցնում ստռած կուրծքը
 Հուժկու ձայնը մարտականջ:

Այս ափերից յեա չէ դալու
 Եւ Աքիլլէսն անմլասս,

¹ Պատրոկլէսի հայրը:

Շուտով, շուտով պիտի և դու,
 Ո՛վ, Պելէոս, որբանաս:
 Կանցնի ուղղի արհաւիրքը,
 Աքիլլէսին կըսպասես,
 Կըզարդարես արքունիքը—
 Նրան շքով ընդունես:

Գատարկ ծովին պիտի նայես
 Ափից ախուր ու արսոււմ,
 Թէ չեն դալիս արդիօք նաւեր,
 Առագասա չէ երեւում:
 Նաւեր կըզան Իլիոնից,
 Ես չեմ լինիլ ոչ մէկում,
 Ես չեմ զարթնիլ մահուան քնից,
 Եւ կըմնամ այս դաշտում:

Ի զուր վերջին տաղնապի մէջ
 Դու քո որդուն կըխնայես,
 Եւ կարկամող բազուկներով
 Նրան շուրջը կըփնտրես.—
 Սիրած երկրից ժամն անջատման
 Ձի քաղցրացնիլ նա այնօր,
 Եւ մինչ ափերն մոռայութեան
 Ձի տարածուիլ ձայնը հօր:

Իմ հայրենիք, վճիտ ջրեր,
 Ձքնող վայրեր հարազատ,
 Եւ ձիթենիք ու դափնիներ,
 Հովիտների զարդարանք,
 Ճոխ ծաղկեցէ՛ք, զարդարուեցէ՛ք,
 Ինչպէս առաջ աննման,
 Ինչպէս առաջ, միշտ թնդացէք
 Միայն ձայներով խնդութեան:

Բայց Աքիլլ ու Պատրոկլէս
 Էլ չէք տեսնիլ զուք բնաւ.
 Մպերքի ջրեր, բազուկս ձեզ
 Գլխիցս մազ խոստացաւ. . .
 Բայց զլուխս փոթորկալի
 Պատերազմում ահագին
 Պատրոկլէսին ես զոհեցի,
 Էլ չըսպասէք իմ աուրբին:

Թռչուն ձիանք, պատերազմից
 (Գողանի օրհասն արդեւեց)
 Չաղատեցիք զուք հերօսին—
 Ձէնքի վերայ նա փռուեց:
 Ձիանք աշխոյժ և եռանդուն,
 Այդքան ինչո՞ւ էք ախրած,

Թաւ բաշերդ թողած հողում,
Գլուխներդ կախ արած:

Մոռացել էք ուտիւղքը,
Հառաչում էք և զողում,
Եւ շողում է արասուքը
Ձեր հրափայլ աչքերում:
Գուք, երեւի, Աքիլլէսին
Վերջին անգամն էք տեսնում,
Ուրեմն հատու էք օրհասին,
Որ ինձ մահ է գուշակում:

Շուտով... նեար պատրաստում է
Ապօլոնը անողոր,
Եւ եկեօրին սպասում է
Քարոնը¹ սև Ստիքսի¹ մօտ:
Եւ, ավերից մոռացութեան,
Պատրուկէսը գիշերով
Եկաւ ինձ մօտ, թեթեւ, անձայն,
Որպէս երազ, թռչելով:

¹ Նաւապետ ստորերկրեայ դիցարանական Ստիքս (Ա-
քերոն) գետի:

Որպէս շունչը մեղմ Ձեփիւռի
Նա շնչաց ինձ վերայ,
Նորա ձայնը ես լսեցի,
Վեր նայեցի և աեսայ—
Քեքոյշ դէմքին հետք արասորի
Եւ անջատման խորին ցաւ. . .
Եւ ես ձեռքս տարածեցի. . .
Դատարկ միջնում չքացաւ:

Սկիւրոսից դէպի հեռու
Նէոպատլէմ¹ կը լողայ,
Կը տեսնէ ափ մի անձանօթ,
Կանաչ բլրակ նորա վրայ:
Նաւավարը նրան կասի,
Դարձած կողմը բլրակի,—
«Ահա շիրիմն Աքիլլէսի,
Այն էլ տեղն է բանակի:

«Այնտեղ, պարսպից, նա գիշերով
Երևում էր մեզ ահեղ,
Սնտանելի հուրն աչքերում,
Սաղաւարտով ձաճանչեղ:

¹ Աքիլլէսի որդին, որ Սկիւրոս կղզումն էր:

Եւ եռակի որոտարով
Ահ էր տալիս քաղաքին,
Եւ արոյսային գունատ դէմքով
Զէնքը ձգում էր գետին:

«Այնտեղ, ձեռքը Ատրիլէսին
Տարով դաշը հաստատեց,
Այնտեղ, կառքով, նա մոլեզվին
Տրոյի վերայ յարձակուեց.
Այնտեղ, հողում, իւր ետեւից
Քարը տուեց դին ճեկաորի,
Յառեց աչքերն սպառնալից
Վերան լքած Տրոյի:»

Եւ իւր նաւից նէոպատլէմ
Կիջնի ափը սրբազան,
Որ միայնակ բլրի վերայ
Դնի և սուր և վահան.
Շուրջը արդէն դատարկուել է...
Խազաղ Սիմոյս և Քսանտ,
Բաղեղ ու փուշ պատատել են
Տրոյիային քարուքանդ:

«Կանցնես դաշտը պատերազմի...
Ուր Աքիլլէսն է կռուած,

Կրտենես հօրանն երէների
Շիրմաց շուրջը մոռացուած,
Եւ քեղանից վերև յանկարծ
Կըլսես ձայն թևերի. . .
Մենք կըլինենք... թևթևի տուած
Ընկերներս հին օրերի:

«Այնժամ յիշիր Աքիլլէսին,
Երկրից արագ նա անցաւ.
Բազըը նրան անփառունակ
Այստեղ մի դար խոստացաւ,
Բայց մերժելով դատարկ կեանքը
Փառքի բուլէն ընտրեց նա,
Եւ ընկերի համար մեռաւ, —
Հաւատարիմ մինչև մահ:»

Լռեց Աքիլլ... մութն է Իդան,
Իլիոնը զեռ տխուր,
Քնած է բանակը Ատրիլեան,
Պատերազմի դաշտը լուռ.
Եւ ծխարով առկայծում են
Խարոյկները բանակի,
Երկա՛ր ու ձիգ ձայնարկում են
Պահնորդները մէկմէկի:

Ե Ր Ա Ձ.

Գիշերն երազում հալածում էին.
Փախչում էի չար թշնամիներից.
Նրանք խառնաձայն հետևում էին...
Գողում էին սիրաս ու ծնինքս ահից:

Իմ առջև տեսայ ընդարձակ զղեակ
Բարձր սառերով փոքրիկ ծմակում.
Ես այնտեղ մտայ... անմարդ ու գառաբեկ
Այն աւերակը ինձ յոյս էր ազգում...:

Զգոյշ կուչ եկած, շունչս պահելով
Ես գողում էի մահուան սարսափից,
Եւ, զարհուրելի աղաղակներով,
Չարագործները մօտիկ էին ինձ:

Յանկարծ զգեալի իմ շուրջ տարածուած
Գերեզմաններից ձայներ զուրս եկան,
Իմ հոգուն ծանօթ ձայներ մոռացուած...
Եւ ես գորութիւն առայ զերբնական:

Անարդ թաղստից զուրս թուայ իսկոյն
Որպէս վրդոված վաղըր դարանից,
Եւ յարձակուեցի ընդդէմ թշնամուն,—
Զէնքերի բողբոսում... զարթեցայ քնից:

1892 յունվարի 20.



Բան է, թէ որ (չի պատահիլ այդ իսկի)
Նահատակուած հային մի բան տանք, ասեն,
Դուք հասկացրէք, իբրև ծանօթ այդ ազգի,
Որ ժամը չէ, հայերը դեռ արհաս են—

Հայոց լեզուն Մեսրոպն իրան հետ տարաւ,
Իսկ կրօնը մի ազանդ է զենդական. . .
Սպասեցէք, մինչև որ մեր սրտացաւ
Խնամքի տակ լուսաւորուեն, առաջ դան:

1891 թ. սարսի 7.

Պ Ե Տ Ո Ւ Է Բ.

Վանայ բանտի խորքից ելած հառաչանք,
Ճիչ, աղաղակ բռնաբարուած աղջկայ,
Թալանուածի լաց ու աղերս, աղաչանք
Թէ որ լսէք, ասացէք թէ՛ բան չըկայ:

Ամբողջ տարին արիւն - քրտինք աշխատող
Հայ զիւղացին թէ որ լինի սովամեռ,
Կամ յուսահատ տանից կորչի հողից հող,
Գրեցէք թէ՛ սաստիկ յուրս էր այս ձմեռ:

Թէ կրակուած հայոց զիւղի բոցերում
Վայ կանչելով մարդիկ պրուեն կենդանի,
Հաւատացրէք— խողողութիւն է արբում,
Ժողովուրդը կեանքն օրհնում է սուլթանի:

Ազատ, համարձակ բարձրացիր, արատ,
Քո պատուանդանի վերայ ոսկեղէն,
Բարձրացիր, իշխիր... Թող մարդիկ անպարտ
Յորդ արտասուքով ոտքդ ողողեն:

Դուրս արի, յանցանք, մեծատան շեմքից,
Խեղդիր, խորտակիր անմեղ տըկարին,
Մի՛ քաշուիր ավրոջ փառաւոր միրքից—
Նա ընկեր է քո առած աւարին:

Եւ քաջալերուած լըբենի բազուկ
ձեղքիլ ճակատը ճշմարտախօսի,
Արդէն արծաթով վաճառուէջ ծածուկ
Եւ ճշմարտութեան խօսքը Յխուսի:

Դու, սեղանաւոր, ձեռքդ տարածիր
Դէպի սեղանը մարդոց սրբութեան...
Մի՛ վախիր,—ամեն բողոք ու խնդիր
Պիտի սին օղու՛մ անկատար միան:

Հեռացրէք նրան Ասածոյ սեղանից
Որ չապականէ մեր սրբութիւնը,
Ազատ պահեցէք անսուրբ բերանից
Վարդանի պաշտած Ասածոյ անունը:

Աւարառութեամբ զօրացած բազկով
Թող նա չըկրէ մականը Մեծի,
Եւ շահախնդիր, կաշառուած խօսքով
Կանգնի քարողիչ փրկութեան գործի:

Թող չըկատարեն Հաշտ ու պատարազ
Սեղանակապուտ, անորժան ձեռքեր,
Ոչ նուիրական կամարների տակ
Անդգայ սրտից վերանան երգեր:

Եւ թող քարկոծուի, ով որ, անդիտակ
Մարդկային կեանքի վսեմ՝ խորհրդին,
Կըհամարձակուի Հայոց յարկի տակ
Քարողել — հովուել այս ժողովրդին:

Ահա, պատմեմ ձեզ մի դէպք,
Մի պատմութիւն, որ էրբէք
Յիշատակով սգալի
Սրտիս հանդիստ չի տալի:

II.

Գիւղից վերև, ճամբի վրայ
Տերևախիտ մի ծառ կայ.
Անտառիցը նա դատուած,
Մարդու կայնից աղատուած
Դեռ կանգնած է և շողին
Տոլ է տալիս մըշակին.
Իսկ նրանցից ոչ հեռու
Մի լեռնային պարզ առու
Դուրս դալով մութ ծմակից
Խոխոջում է փրփրայից:
Սակայն շատ չէ նա խորին.
Այն առուակում հէսօրին,
Երբ որ տապից նեղանում,
Գնում էինք լողանում.
Խաղում էինք, վազվողում
Գոյնզգոյն մանրիկ աւաղում,
Եւ մեր ձիւր մանկական

Մ Ե Ր Օ.

(Գիւղացի մանկան պատմութիւնը.)

I.

Մեր գիւղն այն է, որ հպարտ,
Լեռների մէջ միգապատ,
Խոր ձորերի քարափին,
Ձեռքը տուած ձակատին
Մտածում է տխրադէմ.
Ինչ է ուզում, չըզիտեմ. . .
Այնտեղ մենք պաս չենք ուտում,
Եւ ջերմեռանդ աղօթում,
Ժամ ենք գնում ամեն օր,
Բայց միշտ ցաւեր նորանոր,
Միշտ մի աղէտ, մի վնաս
Մեզ հասնում են անպակաս:—

Միանալով մի առ ժամ
 Այն վտակի աղմուկին
 Խաղաղանխա, խուլ հովտին
 Կենդանութիւն էր ապրիս:
 Ա՛խ, ո՞րքան էր զիւր գալիս,
 Երբ որ տկուր խումբը մեր
 Աղաղակով վաղում էր
 Թիթեռնիկի ետեւից,
 Որ թռչում էր թփերից...
 Եւ միշտ յոգնած ժամանակ
 Հանգչում էինք ծառի տակ:

III.

Այն ժամանակ այնտեղ կար
 Այժմ կորած շիրմաքար.
 Իմ քոյրերս նրա մասին
 Այսպիսի բան ինձ ասին.—
 «Այս քարի տակ մամուռոտած
 Սիրուն Մարուն է թաղած:
 Ժիր էր նա և զիւրեկան.
 Նոր էր իննը տարեկան,
 Նրանց առնը կրք մի օր
 Եկան երկու եկաւոր:

Խնամաստ էին մարդիկը,
 Եւ, Մարոյի մայրիկը
 Երբ որ նրանց առաջին
 Խոնչայ¹ զրեց, ասացին—
 «Ծնորհակալ ենք հաց-աղից,
 Հող տուէք ձեր օջաղից»²:
 Այն ժամանակ Մարոյի
 Հայրիկն առաւ արաղի
 Լիքը բաժակն և ասաց—
 Կամքդ լինի, Տէր Աստուած...
 Նշանեցին Մարոյին,
 Տուին չորբան Կարոյին:

IV.

Գիտե՞ս ով էր Կարուն. նա
 Մի հովիւ էր աժգահա,
 Բոյ-բուսաթին նայելիս
 Մարդու սարսափ էր գալիս:
 Բայց զորանչը անասման
 Սիրով սիրում էր նրան.

¹ Խոնչայ—փայտեայ մատուցարան, որով հաց ու կե-
 րակուր են տալիս ճիւրեղին: ² Փոխարենական դարձուած
 է. կընշանակէ ձեր աղօթիկն ուզում ենք:

Մարօն ասուամ էր նոյնպէս
 (Նրանից եմ լսել ես) —
 «Կարոյին շատ եմ սիրում,—
 Ինձ համար միրգ է բերում»:

V.

Մի օր էլ Կարօն ընկերներով
 Եկաւ զուռնա-զհօլով,
 Եւ Մարոյին զուգեցին—
 Երեսին քօղ ձրգեցին,
 Հինաց զրին ձեռքերը...
 Ապա եկաւ տերաէրը
 Խաչ ու աւետարանով,
 Օրհնեց օծած բերանով
 Կոնարունուկ արած
 Հարսն ու փեսին, և կամաց
 Տարաւ ժամում կանգնեցրեց,
 «Տէր ես, որդեակ» հարցրեց.
 «Տէր եմ» ասաց մեր Կարօն,
 Բայց լուռ կանգնած էր Մարօն.
 Եւ տերաէրը նրան այսպէս
 Խրատ ասուեց— «Երբ օր քեզ,
 Հնազանդ ես, որդեակ, ասեմ,

Գլուխ կրտաս, զէ տեսնեմ:
 «Եւ դու, որդեակ, հնազանդ ես»,
 Մարօն շարժուեց, «այ, ապրես»:
 Մարոյի հայրն էլ ծէսին
 Այսպէս օրհնեց իւր փեսին—
 «Ջաղացեց միշտ հերթ լինի,
 Մէջքդ ամուր բերդ լինի...»
 Իսկ երբ հնչեց «տարան հա»ն¹,
 Նրան փեսի տուն տարան:
 Պատկեցին Մարոյին,
 Տունն չորան Կարոյին:

VI.

Թէ զբբացի զիր-Չանքով,
 Սրտակտուր բժժանքով
 Նրա սիրաը կտրեցին,
 Կամ, թէ նրա հանդերձին
 Այն անհօղի չար ջաղուն
 Քսեց զայլ իւղ թագուն²,

¹ «Տարան հա» — զուռնայի մի եղանակ է, որ հնչում են հարսին հօրանց տանից ամուսնու տունը տանելիս:

² Կախարդելու միջոցներից մէկն է:

Այդ չխնայաւ ոչ դք պարզ,
 Միմիայն փոքրիկ նորահաբս
 Մարօն ատեց իւր մարդուն,
 Փախաւ եկաւ հօրանց տուն:
 Շատ խրատեց աէրաէրը,
 Խրատեցին մեծերը,
 Խրատելով էլ կրկին
 Տարան տունն Կարոյին:
 Գնաց Մարօն, բայց դարձեալ
 Չուզեց նրա մօտ մնալ,
 Որ ծեծու՞մ էր անխնայ,
 Թէ միշտ իրան մօտ մնայ...
 Չուզեց Մարօն, և թաղուն
 Փախչում, դալիս էր հօր տուն.
 Այնանդ էլ հայրն էր ծեծում,
 Մայրն էր թքում անխճում,
 Որ գնաց փեսի մօտ կրկին,
 Սիրէ նրան, ինչպէս կին:
 Մարօն սկսում էր լալ.—
 «Ես նրա մօտ չեմ գնալ...
 Ես սիրում եմ մայրիկին,
 Ես չեմ ուզում լինել կին»:

VII.

Մի օր էլ հայրը բարկացած
 Ծեծեց նրան և սասց,
 «Ի՞նչու իմ տանից, սեւերես,
 Ետ չընայես զէպի մեզ,
 Էլ չըմանես իմ տունս,
 Մրտեցիր անունս...»
 Լալով, ծածկած իւր զեմքը
 Թողեց Մարօն հօր շեմքը.
 Ուրիշ մարդ էլ, ով տեսաւ,
 «Աղջիկ, ամօթ քեզ, սասաւ,
 Լաւ է մեռնելդ սպրեկուց,
 Որ փախել ես քո մարդուց»:

VIII.

Եւ, հայածուած հօր տանից,
 Իւր ամուսնուց, մարդկանցից,
 Սոված, պատուած շորերով
 Նա կորչում էր օրերով.
 Բայց թէ մի մարդ հողասէր
 Չեօքը բռնէր և սսէր,—
 Մեզ մօտ արի, այ թշուառ,

Մի քիչ հաց կեր, կամ մի լար,
 նրա հայրը անաստուած
 չայհոյում էր բարկացած,
 Որ չեն թողնում նորատի
 Աղջկանը խրատի:
 Եւ ամուսնու մօտ՝ տառուած,
 Կամ հօր տանը՝ նախատուած,
 Կամ կուչ գալով խղճալի
 Օջաղի շուրջ օտարի,
 Ամեն սրտի ցաւ տալով,
 Ապրում էր նա միշտ լալով:

IX.

Այսպէս տարիք անց կացան.
 Դիմաց սարից մի չբան
 Մի օր մեզ ձայն էր տալիս,
 Թէ խնայէք, որ քարից,
 Կարմիր շորով մի խիզան
 Ընկաւ ձորը—մի կածան:
 Դուրս թափուեցանք մենք գիւղից,
 Հեռու կանգնած կրկիւղից,
 Տեսանք բարձր քարի տակ
 Ընկած կեռջ մի գլտակ:

Մարդիկ իջան ու բերին
 Ջարդ ու փշուր Մարոյին.
 Եւ ասացին մէկմէկի
 Այսպէս խօսքեր անհոգի—
 «Վաղուց պէտք է այս անէր,
 Կամ թէ իսկի չըծնուէր. . .»
 Աղի լալիս էր հայրը,
 Կուրծքը կոծում էր մայրը,
 Այն ինչ Մարօն պապանձուած
 Ոչի՛նչ, ոչինչ չըխօսաց.
 Մեռաւ, զնաց խեղճ Մարօն,
 Բայց զեռ ապրում է Կարօն:

X.


Սակայն նրա փոքրիկ զին
 Պապերի մօտ չըդրին.—
 (Մեր տէրտէրի սուրբ զրքում
 Գրած էր, թէ նրա հոգում
 Չարեր էին բուն զրեղ. . .
 Նաև հաղորդ չէր առել.)
 Առանց ժամ ու պատարազ
 Այս ճիւղաշատ ծառի տակ
 Փոս փորեցին մի խորին,

Ամփոփեցին Մարոյին,
Այս լեռ քարն էլ սաշեցին,
Բերին վրէն քաշեցին:

XI.

Շատ եմ տեսել, երբ նրա
Խեղճ մայրիկն այս քարի վրայ
Կորանալով ինքը միայն
Լաց էր լինում կիսաձայն.
Խունկ էր ծխում, մոմ վառում,
Որ գիշերուան խաւարում
Երևում էր մեն-մենակ
Նեռուից երկար ժամանակ:»

1887 թ.



Ա Ռ Ա Ի Օ Տ.

Նուէր մեր նոր երիտասարդութեանը.

Մրտամաշ տաղտուկ ծանրը գիշերի...
Ահռելի սարսափ գիշակերների...
Թառանջում էի և յալահառաջ
Միմիայն արևի լոյս էի խնդրում,
Երբ որ շողացին մի քանի ճաճանջ
Մութ հորիզոնի մնայլ ամպերում:

Առաւօտն ահա, բացականչեցի,
Եւ թնդաց հողիս. թեթև շնչեցի...
Ցանկալի կեանքի նշան ակներև.—
Պատառուեց ահա թանձր խաւարը,
Օրը բացվում է, և գլխիս վերև
Շառաղունել է երկնակամարը... .

1892 թ. մարտի 12.



N. N. ԻՆ.

Անքնի հոսանքն իւր ընթացքում
Մեզ մօտեցրեց միմիանց,
Բայց զգացի ես իմ հոգում
Հէնց նոյն ժամին մի կասկած:

Նախազգացումն ինձ չըխաբեց.—
Յայտնուեցար դու շուտով,
Եւ մենք այժմ բաժանուած ենք
Ատերութեան անդնդով:

Արդէն ծանրը ես տուժեցի
Քեզ կանչելով «բարեկամ»,
Ել մի ջանար, փարիսեցի,
Գրաւել սէրս միւս անգամ:

Մի՛ բարձրացնիր կենաց բաժակ,
Ինձ մի՛ օրհնիր ժպտերես,
Ել չի դարձնիլ ոչ մի մաղթանք
Իմ հաւատը զէպի քեզ:—

Քո պատկերը իմ սրտի մէջ,
Նզովելէ՛ր յիշատակ,
Ամեն անգամ զարթեցնում է
Բուռն ցասումն և տանջանք:

Գուցէ տեսնես ինձ հալածուած,
Սնցաւակից և մենակ,
Թափառելիս անտուն, անհայ. . .
Սակայն, և այն ժամանակ,

Անհնազանդ արտասուքս
Կամ հառաչանք մի թեթեւ
Եթէ յանկարծ յայտնեն վիշտս
Ակամայից քո առջև,

Դու մի՛ կարծիր, թէ քեզանից
Կարեկցութիւն եմ խնդրում,
Այլ և ի զուր մի՛ հարցնիր ինձ,
Թէ ինչ յաւ կայ իմ սրտում:—

Քո խօսքերն իմ ախրութեանը
 Չեն լինելու մխիթար,
 Եւ իմ սրտի զաղանարանը
 Միշտ փակուած է քեզ համար:

Երկինք, դետինք թող միանան,
 Կանգնի վկայ տիեզերք—
 Տւողը հոգուս կարողութեան,
 Էլ չեմ սիրիլ քեզ երբէք:

1891 թ. ապրիլի 10:



* * *

Ինձ մի՛ խնդրիր, ես չեմ երգիլ,
 Շատ է տխուր իմ երգը,
 Նրա ձայնը կըխորտակի
 Քնքոյշ սրտից բերկրանքը.
 Ո՛չ քեզ համար այսպիսի երգ
 Երգելու չեմ ես երբէք:

Ես երգեցի սարի վերայ
 Եւ չորացան խոտ ու վարդ,
 Անտապատ է այնտեղ հիմայ,
 ՄԵ, ամայի անտապատ.
 Հառաչանքից այրուած սարում
 Էլ ծաղիկ չի դալարում:

Ես երգեցի կէս զիշերին,
 Վառ աստղերը իմ երգից
 Գունատուեցան, դողդողացին
 Եւ չքացան երկնքից.
 Մէկը միմիայն, որ փայլում էր,
 Այն էլ մահուան աստղն էր. . .

Բոյր ու զեփիւռ ես կուգէի
 Եւ արշալոյս ոսկեփառ,
 Որ մի սիրոյ երգ հիւսէի
 Եւ երգէի քեզ համար,
 Բայց իմ սիրտը բռնած են զեռ.
 Թոյն ու թախիճ և զիշեր:

1892 թ. մարտ.



* * *

Երբ զիշերացին
 Մութ հորիզոնից
 Արև կամ լուսին
 Երևում են ինձ,
 Իմ ախուր հոգում
 Ծագում է ոսկի
 Ճաճանչը յուսոյ
 Յարատև կեանքի,
 Եւ մտածում եմ.—
 Աշխարհը զեռ կայ,
 Դեռ օր կրտեսնեմ. . .
 Եւ նշանն ահա:
 Հրձվում է հողիս,
 Երգում եմ զուարթ,


Եւ ժպտում են ինձ
Թէ Աստուած, թէ մարդ:

Ասածոյ տաճարում
Մոմը սեղանից
Խնկաբոյր ծխում
Վառվում է հանգիստ.
Իմ մուսլ հոգում
Առաքինութեան
Ճշմարիտ կեանքի
Յաւիտենական
Լոյսը յօղանում,
Վառվում է նոյնպէս.
Սրտով մեղմանում,
Աղօթում եմ ես:

Կուսի աչքերին
Նայում եմ ազահ.
Թնդում է հոգիս,
Դողում ահամայ,
Եւ կենդանութեան
Ախտերը կռում,
Ախորժ պրփում են
Իմ երակներում.

Սիրտս անհանգիստ
Պայթում է, կարծես,
Զգում եմ ցաւ, վիշտ...
Եւ տանջվում եմ ես.
Բայց այն տանջանքը
Քաղցր է ինձ համար,
Քան երկար կեանքը,
Աղօթք փրկարար:

1892 թ. լունվարի 9.



ԻՄ ՍԷՐԸ.

Ես սիրել եմ վարդը տժգոյն
Սիրուց տանջուած այտերի,
Մեղամաղձոտ խաղաղութիւնն
Զոյգ սևորակ աչերի:

Ես պահել եմ սրտիս խորքում
Մի լուռ դաղանիք սիրային,
Եւ այն երբէք, ոչ մի երգում
Յայտնելու չեմ աշխարհին:

Բայց և պահել անկարող եմ,
Օ, դժուար է համբերել—
Զասել ինչով բախտաւոր եմ,
Զասել ինչպէս եմ սիրել:

1892 թ. մարտի 18.



ԽՈՍՏՈՎԸՆՈՒԹԻՒՆ.

Քո աչքերում որ փայլում է
Հողուս Հուրն է մշտավառ,
Իսկ ժպիտդ, որ բացվում է,—
Սրտիս բերկրանքն անսպառ:

Երբ որ հանգչի հուրն աչքերիդ
Եւ շրթունքդ կարկամի,
Կըմեռանի նաև զերիդ...
Եւ մեզ մի մահ կըտանի:

1891. թ. նոյեմբ 9.



Հ Ի Ը Թ Ե Յ Տ .

Այստեղ ահա կրբաժանուներ.

Մնաս բարեաւ, սիրելի.

Այսպէս եւ չեմ յաւել երբէք

Դառնութիւնով սիրտս լի:

Այստեղ ահա քեզ թողնում եմ

Եւ չըզիտեմ, ուր կերթաս.

Կասկածներից եւ դողում եմ. . .

Թող պահպանէ քեզ Աստուած:

Այն, առանց քեզ տխուր կեանքիս

Օրը տարի կրդառնայ,

Բայց, ուր լինիս, դարձեալ հոգիս

Շուրջդ պիտի թրթռայ:

Մնաս բարեաւ, բայց միշտ յիշիւր,

Որ քեզ շատ եմ կարօտել,

Եւ տեսութեան ժամի համար:

Զըմուռնաս սղօթել:

1891 թ. մայիսի 27.



Յ Ի Շ Ի Ր .

Իւր չար բազրի ճանկում բռնուած
Նա քեզանից հեռու մնաց.—

Սիրեց

Քեզ հեռուից,

Զրկուած

Քո բոյրից,

Եւ ամենջուրից թաղուն

Գիշերը անքուն:—

Նրա սէրը մնաց անհաս,

Բայց անունը չըմոռնաս,—

Պահիր

Քո մտքում,

Յիշիր

Աղօթքում.


Եւ քո սրտում նա


Թող անմահանայ:

1892 թ. 20 մարտի.




ԽՈՐՀՐԳԱԾՈՒԹԻՒՆ.

Ո՞րն է զբախտը,— վայրն երանաւէտ,
Ուր պիտի ապրեմ գերեզմանից յետ.
Միթէ մարդկային տառապած կեանքը
Զբաւեղծեց այն սուտ մխիթարանքը.
Եւ միթէ նորա մահից սարսափած
Ազահութիւնը չէ իրան խաբած...
Սակայն բարի է.— մի տանջուած արդար,
Կամ իրան արդար համարող մի չար
Երկրային կեանքի վերջին վայրկինին
Հանգիստ ու խաղաղ կաւանդէ հոգին
Համաձայն իրան ճաշակի, կամքի
Վայելքն յիշելով խոստացեալ կեանքի.
Եւ ահա միակ, բայց մեծ օգուտը,
Որ մարդկութեանը աուեց այս սուտը:
Մէյս է մեր կեանքը.— լոկ խաբէութիւն.
Ո՛հ, միթէ և ես, ինչպէս մի հնչիւն,
Մէյս իմ յոյսերիս, ձգտումներիս հետ
Պիտի մեռանիմ, չքանամ անհետ...


Զէ, սիրելի է խոստումն երկնքի—
Յոյսն յաւերժական, անվախճան կեանքի.
Հեռու ինձանից, հոգեմաշ կասկած,
Ողջոյն քեզ, ողջոյն, սվ կեանքի Աստուած.
Արի՛, յայտնուի՛ր, նշկահիր մահու
Տարակուսանաց տաղնապն ահարկու
Եւ կոյր հաւատով զօրացրու հոգիս—
Անմահութիւն սուր լքացած կեանքիս...


Բայց ի՞նչպէս պիտի կեանք առնեմ կրկին.
Արդեօք լուսակազմ, աննիւթ, անմարմին
Պիտի սաւառնեմ անծայր եթերքում,
Թէ իբրև մի հունչ շրջեմ աշխարհում,
Թէ անփոյթ, անգործ թափառեմ պիտի
Մարդոց աչքերին անտեսանելի,
Թէ ամպերի մէջ պիտի ես հանգչեմ
Եւ ոտքիս տակից կայծակներ իջնեն...


Օ՛, ներիր Աստուած, ծածկադէտ, անհուն.
Ներիր մեծամիտ, զոռող պատանուն.
Աննշան ճճիս չարաչար մեղայ,—
Յանդուգն խորհրդով խորամուխ եղայ,
Զգտեցի պարզել քո աստուածային
Անհասանելի, անմեկին զազանին:


Յ Ա Ն Կ

	ԵՐԵՍ.
Անուշ	3
Ախթամար (ազգային աւանդութիւն)	40
Մերժած օրէնք	45
Շունն ու Կատուն (ժողովրդական աւանդութիւն)	62
Սի պատկեր.	66
Դեցիմ Լաբերիոս (ռուսերէնից).	69
Տարօնի գարունը (հատուած պօէմայից)	72
Նուէր Ան. Ար.-ին	74
Կանչ.	76
Համերգ.	79
Դեռ անհիշելի	80
Երբ խօսում էիր	82
Կուրծքս երբեմն ետ է գալիս	83
Ա, ի, ես երանի.	85
Երգչին.	86
Ո՛հ, խնայեցէք	87
Լերձօնտովից.	88
Յիշողութիւն հայրենիքից	89
Գումանի երգ	93
Տարօնի առաւօտը (հատուած պօէմայից)	95
Վերջին խօսք	98
Խղձալի՛ մարդ.	100

	ԵՐԵՍ.
Երբ տեսնում եմ	102
Մանկուծին	104
Մուժն էր երկինքը	106
Քրիստոս յարեալ	107
Գիշերային մտածմունք	108
Նրան	110
Դերասան Ադամեանի մահը	111
Րօմանս (Պուշկինից).	113
Երգչի վրէժը.	116
Կորուստից լետոյ	117
Քրիստոսն անապատում.	118
Արիլլէս (Ժուկովսկուց)	119
Երազ.	130
Պատուէր	132
«Ոչ յօրինակ այլոց»	134
Ազդ	135
Մարօ (զիւղացի մանկան պատմութիւն)	136
Առաւօտ. Նուէր մեր նոր երիտասարդութեանը	147
N. N.-ին.	148
Ինձ մի խնդրիր	151
Երբ գիշերային	153
Իմ սէրը	156
Խոստովանութիւն	157
Հրամեշտ	158
Յիշի՛ր	159
Խորհրդածութիւն	160



26
44

с. 26
10

213

ՀՀ Ազգային գրադարան



NL0624815

